

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆԻՆ (1927-31)

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԵՂՈՍԵԱՆ
varny1@yahoo.com

«Վազգէն Շուշանեանի հետք եւ առնուազն տասնեակ տարիներ մօտ եմ եղել: Չեմ ասում «մտերիմ» որովհետեւ Վազգէնը իր բնատրուութեամբ չունէր եւ չէր կարող մտերիմ ունենալ, որքան այլասէր եւ այլախոհ էր երեւում, խորքում եսակենտրոն էր, դժուար հանդուրժող ու դժուար հանդուրժելի: Խիստ շեշտուած անհատականութիւն էր»¹:

Այս տողերուն հեղինակի՝ Սիմոն Վրացեանի (1882-1969), եւ իր կրտսեր ժամանակակիցի՝ Վազգէն Շուշանեանի (1903-1941) յարաբերութեան մեր գլխաւոր աղբիւրներն են 1963ին Վրացեանի հրատարակած յուշագրութիւնը եւ Շուշանեանէն ստացած նամակները, որոնք ի պահ դրուած են Պէյրութ, Համազգայինի գրական արխիւի՝ Սիմոն Վրացեանի թողոնին մէջ²:

Յայտնի չէ, թէ արդեօք անոնք հանդիպա՞ծ էին Հայաստան 1920-21ին, երբ Շուշանեան իր գտնուած է անկախութեան վերջին ամիսներու եւ խորհրդայնացման սկիզբի դարձակէտին՝ Արմաշի երկրագործական վարժարանի իր դասընկերներուն հետ: Ամէն պարագայի, պէտք է ենթադրել, որ անոնց յարաբերութիւնը սկսած ըլլալու է 1922-23ի շուրջ, երբ երկուքն ալ արդէն հաստատուած էին Փարիզ:

22-27 Օգոստոս 1925ին, Հ.Յ.Դաշնակցութիւնը մասնակցած է Ընկերվար միջազգայնականի Մարսէյի համագումարին³: Հինգ հոգինոց պատուիրակութեան կողքին (Շաւարշ Միսաքեան, Լեւոն Շանթ, Արշակ Զամալեան, Ռուբէն Տէր Մինասեան եւ Սիմոն Վրացեան), կը մասնակցէին նաեւ շրջանէն երեք երիտասարդներ՝ Պ. Զամարեան, Հ. Ժամկոչեան եւ Վազգէն Շուշանեան, որ ներկայ եղած է Բ. յանձնախումբի նիստերուն («Աշ-

¹ Սիմոն Վրացեան, *Կեանքի ուղիներով. դէմքեր, դէպքեր, ապրումներ*, Գ. հատոր, տպ. Մշակ, Պէյրութ, 1963, էջ 215:

² Համազգայինի գրական արխիւ, Սիմոն Վրացեանի թողոն, պահարան Ե/Ա-8: ԺԴ. եւ Ի. նամակները Շուշանեանի ձեռագիրով են, թէւ Լեւոն Գրիգորեանի ստորագրութիւնը կը կրեն:

³ Տե՛ս՝ «Ընկերվար միջազգայնականի համագումարը», *Յանաջ*, 23 Օգոստոս 1925. նաեւ՝ Շ., «Արիսպագոսը», *Յանաջ*, 26 Օգոստոս 1925. նաեւ՝ «Աշխատաւորական» ընկերվարական ընդհանուր ժողովը», *Յանաջ*, 30 Օգոստոս 1925. նաեւ՝ Շ. «Մղձաւանջը», *Յանաջ*, 30 Օգոստոս 1925. նաեւ՝ «Աշխատաւորական համագումարին որոշումները Խորհրդային Միութեան եւ ազգերու ինքնորոշման մասին», *Յանաջ*, 2 Սեպտեմբեր 1925:

խատույթան կեանքի պայմանները եւ գործազրկութիւնը»)⁴: Նոյն տարին, կուսակցութեան պաշտօնաթերթը՝ *Դրօշակ*, վերսկսած էր իր հրատարակութիւնը Վրացեանի խմբագրութեամբ: Վերջինս վկայած է, թէ Շուշանեան «մտերիմ էր երէց ընկերների շարքի հետ, եռանդով մասնակցում էր «Դրօշակ»ի կուսակցական աշխատանքին, մօտ էր խմբագրութեան, որին, ի վերջոյ, գործօն աշխատակից դարձաւ, մանաւանդ, ընկերվարական նիւթերով»⁵: Ինչպէս ցոյց կու տայ առաջին նամակը, Մարտ 1927ին Վրացեան աշխատակցութեան հրաւեր ուղղած է Շուշանեանին⁶:

«Ես մինչեւ 1933, ուրեմն երեսուն տարեկանիս, օրական 16 ժամ աշխատած եմ, Աստուծոյ օրը, նոյնիսկ արձակուրդներու: Բանուորութիւն ըրած եւ նախնական ուսումնաւորական, տեղ մը հասնելու համար: Վալայր, Կրնոպլ, Փարիզ: Օր մ'իսկ պարապի չեմ անցուցած: Մինչեւ այդ թուականը դերձակի մը հագուստ մը կարել չեմ տրուած. կ'երթայինք «Մառշէ օ փիւս»էն (պիթ պագարի) կը գնէինք մեր հագուստները: Ծխախոտիս եւ գիրքերուս դրամը եւ կտոր մը հաց, ուրիշ բան չեմ ուզած, չեմ փափաքած: Այդ քիչը սակայն շահուած՝ արդա՛ր վաստակով»⁷:

Կարօ Փօլատեանի գրի առած այս տողերը խօսուն վկայութիւն մըն են Շուշանեանի՝ ֆրանսական կեանքի առաջին տասնամեակին մղած ապրուստի պայքարին: Վրացեանին ուղղուած նամակներու թղթածրարը կը վերաբերի այդ շրջանի մէկ քանի տարիներուն՝ 1927-31ին, հանդիսանալով խօսուն վկայութիւն մը Շուշանեանի ապրած դժուարութիւններուն եւ յամառ հետապնդումներուն՝ ո՛չ միայն իրեն, այլեւ իր կարգ մը ընկերներու համար նիւթական օժանդակութիւն ձեռք բերելու: 1930ին նոյնիսկ հետամուտ եղած է Միացեալ Նահանգներ գաղթելու:

Ըստ Վրացեանի վկայութեան, իր եւ Շուշանեանի խօսակցութեան գլխաւոր նիւթը գրականութիւնն էր. «Նա ապրում էր գրական հարցերով: Ազահութեամբ լսում էր ամէն բան որ կապ ունէր գրականութեան, մանաւանդ, հայ գրականութեան հետ: Անյազ՝ բայց անկարգ ընթերցող էր: Կարդում էր, Նիկոլ Աղբալեանի պէս, ամէն բան, որ ձեռքն ընկնէր»⁸: Նա-

⁴ «Հ. Յ. Դաշնակցութիւնը Բ. ինտերնասիոնալի համագումարին», *Դրօշակ*, Սեպտեմբեր 1925, էջ 95: Հմմտ.՝ Վրացեան, էջ 216: Համագումարի նկարագրութիւնը տե՛ս՝ «Մարտէլիի համագումարը», *Դրօշակ*, Սեպտեմբեր 1925, էջ 86-93: Հետաքրքրական է, որ մամուլին մէջ միայն յիշուած են հինգ աւագները իբրեւ ներկայացուցիչ (հմմտ.՝ «Հայկական լուրեր», *Հայրենիք*, 2 Սեպտեմբեր 1925):

⁵ Վրացեան, էջ 212:

⁶ *Դրօշակի* աշխատակցութեան մասին, տե՛ս՝ Կ. Յովհաննէսեան, «Անկեղծ ընկերվարականը», *Բազին*, Յունուար 1983, էջ 131-145:

⁷ Կարօ Փօլատեան, «Գրագէտը, որ իր հոգոյն խորը Արարատ ունէր», *Բազին*, Յունուար 1983, էջ 23:

⁸ Վրացեան, էջ 210:

մակներուն մէջ չեն պակսիր գրական եւ մտաւորական հարցերու արծարծումներ, թէւ անոնք տիրական դերակատարութիւն չունին:

Նամակներուն երկրորդ կարեւոր նիւթը Նահատակ գրագէտներու բարեկամներու (ՆԳԲ) գործունեութիւնը եղած է: Սեպտեմբեր 1929ին հիմնուած հրատարակչականը, ինչպէս իր անունը կը յուշէր, նպատակ դրած էր *«հաւաքել եւ հրատարակութեան տալ արեւմտահայ նահապետական մեռած գրողներուն երկերը»*: Վրացեան ու Շուշանեան քանիցս զրուցած են Մեծ Եղեռնի զոհ գրողներուն երկերու հրատարակութեան հարցին շուրջ: Ըստ Վրացեանի, երիտասարդ գրագէտն էր, որ զինք առաջնորդած է առաջին հաւաքոյթին, որ 10-12 հոգիի ներկայութեամբ տեղի ունեցած է փարիզեան արուարձաններէն Սէն-Քլուի սրճարանի մը վարի յարկին մէջ: Նախագահ ընտրուած է Վրացեան, քարտուղար՝ Մկրտիչ Պարսամեան, իսկ գանձապահ՝ Լեւոն Գրիգորեան: Միւս անդամներն էին Վազգէն Շուշանեան, Լեւոն Մոզեան, Կարօ Սասունի, Շաւարշ Նարդունի, Մկրտիչ Երիցանց եւ Օհան Կարօ: Ընկերութիւնը գործի ձեռնարկած է 4-500 ֆրանքի դրամագլուխով, որ գոյացած էր քանի մը անդամներու տուած գումարէն իբրեւ փոխառութիւն⁹: Ըստ ամենայնի, արդարացի էր մահէն երկու ամիս առաջ՝ 4 Փետրուար 1941ին, Շուշանեան գրածը իր օրագրին մէջ.

Մարդ ստիպուած է ամչնալ նոյնիսկ այն բոլոր ազնիւ ձեռնարկներէն՝ որոնց համար երիտասարդութիւն վատնած է:

Օրինակ այդ Ն. Գ. Բ.ը:

Կրնամ գէթ այս էջերուն վստահիլ թէ այդ միութեան գաղափարը յղացողը ես եմ եղած ու ես է, որ առաւելապէս աշխատած եմ զայն կեանքի կոչելու¹⁰:

Վրացեան գրած է Շուշանեանի աշխատանքին մասին.

Շուշանեանը նախանձախնդիր եւ հոգաձու էր առհասարակ, դէպի հայ գրականութիւնն ու հայ հեղինակները: Այդ ես տեսայ Նահատակ Գրագէտների Բարեկամների Ընկերակցութեան հիմնադրութեան եւ հետագայ աշխատանքների նրա բերած մասնակցութիւնից: Նահատակ Գրագէտների Բարեկամների ընկերակցութիւնը կարճատեւ, բայց հետաքրքրական երեւոյթ էր Սփիւռքահայ կեանքում: Իբրեւ համեստ, բայց գնահատելի ձեռնարկ, նա արժանի է յիշատակութեան: Ինչ չափով ես մաս ունեցայ այդ ձեռնարկում՝ որոշ չափով պարտական եմ Վազգէն Շուշանեանին¹¹:

Արձագանգելով ընկերութեան հիմնադրութեան, Յ.Ճ.Սիրունի արձանագրած է. *«Խղճի խա՛յթն է արդեօք որ քով քովի բերեր է Փարիզի սաքանի մը սրտցաւ տղաքը: Տեսեր են անոնք որ հայ ժողովուրդի համադարձ թշուառութեան, ընթացիկ հոգերու ու պանդուխտ կեանքի բազմաթիւ դժուարութեանց հետեւանքով, հայ մշտնջենականութիւնը, պանդուխտ ու ցանուցիր ինք ալ, պատերազմի դադարումէն ահա՛ տասը տարի յետոյ*

⁹ Նոյն, էջ 219-20:

¹⁰ «Վազգէն Շուշանեանի օրագիրը», *Նայիրի*, 14 Հոկտեմբեր 1956, էջ 9:

¹¹ Վրացեան, էջ 219:

տակալին հաւաքական որեւէ ձեռնարկ չ'ընեն' ամփոփելու եւ հրատարակելու համար հայ գրչի այդ ազնիւ աշխատւորներուն ցրուած էջերը: Համեմատական հանգստի օրեր են այսուհանդերձ, ու պէտք է որ այլեւս կատարուի այդ աշխատանքը, մտածեր են անոնք»¹²:

Ծրագրուած էր, առաջին հերթին, 12 հատորներու լոյս ընծայումը (Ռուբէն Զարդարեան, Մելքոն Կիւրճեան, Մշոյ Գեղամ, Գեղամ Բարսեղեան, Արփիար Արփիարեան, Գրիգոր Զօհրապ Տիգրան Զէօկիւրեան, Երուանդ Օտեան, Արտաշէս Յարութիւնեան, Երուանդ Սրմաքէշխանլեան, Ռուբէն Սեալ, Տիրան Զրաքեան), որոնցմէ առաջին եօթը լոյս տեսած է 1930-33 ժամանակաշրջանին (1930ին՝ մէկ, 1931ին՝ չորս, 1932ին՝ մէկ, 1933ին՝ մէկ)¹³:

1930ի սկիզբին Վրացեան տարի մը մեկնած է Ամերիկա կուսակցական գործով¹⁴: Տարեվերջին, Նիւ Եորքի մէջ կազմած է ՆԳԲի մասնաճիւղ մը, որուն նպատակն էր թէ՛ նիւթապէս սատարել Փարիզի հրատարակչական գործին եւ թէ՛ օգնել գիրքերու սպառումին¹⁵: Մասնաճիւղին մաս կը կազմէին բժ. Յովհ. Գ. Էրկանեան (ատենապետ), Եղուարդ Սահակեան (ատենադպիր), Ղազար Ե. Պոյաճեան (գանձապահ), բժ. Լեւոն Մ. Աճէմեան, Յակոբ Անտոնեան, Յակոբ Խաչմանեան, Ասատուր Խտրեան, Յովհան Կարապետեան, Պետրոս Կէօվիկ, Յ. Պարոյրեան, պատ. Ա. Ա. Պետիկեան եւ Յովսէփ Փուշման (անդամներ): Նիւ Եորքի մասնաճիւղը 1931ի սկիզբին հաղորդագրութիւն մը հրատարակած է, յայտնելով, թէ արդէն Զարդարեանի հատորը լոյս տեսած էր, Կիւրճեանի հատորը մամուլի տակ

¹² Շրջիկ, «Նահատակ գրագէտներու բարեկամներ». նօթեր հին աշխարհէն», *Հայրենիք*, 15 Նոյեմբեր 1929, էջ 1-2:

¹³ Ռուբէն Զարդարեան, *Ամբողջական երկեր*, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 1, Փարիզ, Imprimerie de Navarre, 1930. նաեւ՝ Հրանդ (Մելքոն Կիւրճեան), *Ամբողջական երկեր*. Ա. Պանդուխտի կեանքէն, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 2, Փարիզ, Imprimerie de Navarre, 1931. նաեւ՝ Գեղամ Տէր Կարապետեան (Գեղամ), *Տարօնի աշխարհ. պատկերներ ու պատմութիւններ*, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 3, Փարիզ, Imprimerie de Navarre, 1931. նաեւ՝ Գեղամ Բարսեղեան, *Ամբողջական գործը. արձակ էջեր, պատմութիւններ ու զանազանք*, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 4, Փարիզ, Imprimerie de Navarre, 1931. նաեւ՝ Արփիար Արփիարեան, *Պատմութիւններ ու վիպակներ*, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 5, Փարիզ, Imprimerie de Navarre, 1931. նաեւ՝ Գրիգոր Զօհրապ, *Ծանօթ դէմքեր եւ պատմութիւններ* «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 6, Փարիզ, Imprimerie de Navarre, 1932. նաեւ՝ Տիգրան Զէօկիւրեան, *Վանքը. հերոսը*, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 7, Փարիզ, Imprimerie de Navarre, 1933:

¹⁴ Վրացեան, էջ 221:

¹⁵ Նոյն, էջ 220:

էր, իսկ Բարսեղեանի հատորը՝ տպարան ուղարկուելու պատրաստ: Բաժանորդագրութեան գինը սահմանուած էր 10 տոլար՝ 12 հատորի դիմաց, եւ ըսուած է, թէ 12րդ հատորը պիտի ըլլար «*հաւաքածոյ մը հապորնսրի երկերու այնպիսի հեղինակներէ որոնց գործը առանձին առանձին վերցուցած բաւական չէ հապոր մը լեցնելու*», ինչ որ շեղում մըն էր սկզբնական նախագիծէն, եթէ երբեւէ նման ծրագիր եղած էր: Ինչպէս նամակները ցոյց կու տան, չափազանցութիւն մըն էր, սակայն, այն յայտարարութիւնը, թէ Փարիզի յանձնախումբը որոշում կայացուցած էր «*մինչեւ Դեկտեմբեր, 1931, հրապարակութեան տալու մնացեալ հապորները եւ այսպիսով լրացնելու այս առաջին շարքը*»¹⁶: Հաւանաբար միջոց մըն էր՝ յաւելեալ հետաքրքրութիւն ստեղծելու հնարաւոր բաժանորդներու շրջանակին մէջ: Հայրենիք եւ Ասպարէզ խմբագրականներով անդրադարձած են նախաձեռնութեան¹⁷:

Վրացեան, որ 1931ի սկիզբը վերադարձած է Փարիզ, վկայած էր, որ Շուշանեան «*«Յառաջ»ի հետ յարաբերութիւնները գրեթէ խզել էր, չեմ յիշում, ի՞նչ պատճառով: «Հայրենիք»ից դառնացած էր, խմբագրական, իր կարծիքով, անտեղի կրճատումների համար: «Յուսաբեր»ի հետ էլ հաշտ չէր*»¹⁸: Հաւանաբար այս մեկնակէտով, 1931ի վերջերուն, Շուշանեան գաղափար յղացած է գրական թերթ հրատարակելու Մետրոպ Գոյումմեանի եւ Լեոն Մոզեանի քաջալերանքով: Վրացեան հրաւիրուած է խորհրդակցութեան՝ Café d'Harcourt (Place de la Sorbonne, փակուած՝ 1940ին), 10-15 հոգիի ներկայութեամբ: Վրացեան մերժած է իրեն եղած առաջարկը՝ պատասխանատու խմբագիր ըլլալու եւ խորհուրդ տուած՝ հրաժարիլ այդ միտքէն, կասկածելով, որ խորհրդային աղբիւր մը կար անոր ետին: Այդ առիթով, գրած է «Առակ մեծ փոքրերի համար» (8 Յունուար, 1932)¹⁹:

ՆԳԲԻ 1933ի հաշուետուութիւնը կը նշէր, թէ «*տնտեսական տագնապը քիչ մը կասեցուցած է «Բարեկամներու» աշխատանքի ընթացքը, բայց յուսալի է, որ նիւթական պայմաններու բարելաւումով, նորէն կ'արագանայ գործին թափը*»: Մատենաշարի առաջին վեց գիրքերը տպուած էին 1500 տպաքանակով, իսկ Չէօկիւրեանի հատորը՝ 1000 օրինակով: Տպուած 10.000 օրինակէն ծախուած էր 5.081ը: Նախնական բաժանորդագրութիւնը արձանագրած էր 131 բաժանորդ: Մուտքը 78.587,95 ֆրանք էր,

¹⁶ «Կոչ ամերիկահայ գրասէր հասարակութեան», Հայրենիք, 18 Յունուար 1931, էջ 1 (արտատպուած՝ Ասպարէզ, 23 Յունուար 1931, էջ 1 եւ 3): Տե՛ս նաեւ Ե. Ս. [Եդուարդ Սահակեան], «Նահատակ Գրագէտներու Բարեկամներ Նիւ Եորքի մէջ (տեսակցութիւն մը ատենապետին հետ)», Հայրենիք, 4 Ապրիլ 1931, էջ 1-2:

¹⁷ «Նահատակ գրագէտներու գործեր», Հայրենիք, 24 Յունուար 1931, էջ 4. «Նահատակ Գրագէտներու Բարեկամներ», Ասպարէզ, 23 Յունուար 1931, էջ 2:

¹⁸ Վրացեան, էջ 213: Տե՛ս նաեւ՝ նոյն, էջ 217: Ամսագրի կրճատումներուն մասին, տե՛ս՝ նամակ ԺԹ.:

¹⁹ Տե՛ս՝ Վրացեան, էջ 212-15:

իսկ ելքը՝ 78.546,80 ֆրանք: Նախատեսուած յաջորդ հեղինակներն էին Օտեան, Երուխան, Արտաշէս Յարութինեան, Չրաքեան եւ Ռուբէն Սեւակ²⁰:

Միայն տնտեսական տագնապը չէր, որ հրատարակչական թափը կասեցուցած էր, այլեւ 1932-33ի Մարտկոցական շարժումը, որուն մասնակիցներէն էին Շուշանեանը, Մոզեանը եւ Երիցանցը, որոնք բնականաբար դուրս եկած են ՆԳԲի կազմէն²¹: Վրացեանի վկայութեամբ, Շուշանեան «*դժգոհ էր, ինչպէս ինքն էր ասում, դաշնակցական մամուլի մէջ, իր կարծիքով, իշխող մենապիրութիւնից*»: Այս դժգոհութեան պատճառը, ըստ յուշագրին, հիներու եւ նորերու պայքար մըն էր, քանի որ «*դաշնակցական թերթերի գլխին ամուր նստել էին հները, նորերուն տեղ չէր մնում: Խմբագիր, գործիչ, պատուիրակութիւն, ազգային իշխանութիւն, կուսակցական ղեկավարութիւն հների ձեռքն էր*»: Վրացեան նորերու այսօրինակ դժգոհութեան վերագրած է *Մենք* պարբերականի հրատարակութիւնը, «*որ առակի թոչունի նման խոստացաւ ծովը այրել, բայց իսկապէս ինք այրեցաւ*», իսկ նոյն հոգեբանութեան հետեանք համարած է Մարտկոցական շարժումը²²:

1933ին, ՆԳԲի ծրագիրը շեղում մը արձանագրած է. ութերորդ հատորը նուիրուած է հրատարակչականի անդամ, նոր մահացած արձակագիր Օհան Կարոյին (1890-1933)²³: Ծրագրով նախատեսուած հեղինակներէն յաջորդաբար լոյս տեսած են Օտեանի (1935) եւ Յարութինեանի (1937) հատորները²⁴:

Բ. աշխարհամարտի նախօրեակին, հրատարակչատունը որդեգրած է նոր անուն մը եւ նոր գործելակերպ մը, որուն մասին «Կարետոր յայտարարութիւն» մը կատարած է 1939ին՝ *Արդի հայ գրականութիւն* հաւաքածոյի առաջին հատորի կողքի ներքին կազմին վրայ.

Արդ, կը գտնուինք գործունէութեան նոր շրջանի մը սկիզբը: *Նահապակ կամ մեռած* գրագէտներուն հրատարակութիւնը վերջացած չէ անշուշտ: Մէկէ աւելի դէմքեր իրենց կարգին կը սպասեն: Եւ սակայն մեր նոր կեանքը ունի նաեւ իր նոր պարտադրութիւնները: Անցեալի անսպառ նիւթերու կարգին, արդէն կազմուած է *Արտասահմանի նոր գրականութիւն մը*, գրական բոլոր սեռերով: Հրատարակչական ուրիշ որ եւ է մարմին գոյութիւն չունի այն նոր հոգը ստանձնելու

²⁰ «Նահատակ Գրագէտներու Բարեկամներ», *Վէմ*, 2:1933, էջ 141-43:

²¹ Վրացեան, էջ 220:

²² Նոյն, էջ 212:

²³ Օհան Կարո, *Խորհրթներէն մինչեւ խորհրդարանը. արձակ էջեր եւ քերթաւանքներ*, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 8, Փարիզ, Imprimerie de Navarre, 1933:

²⁴ Երուանդ Օտեան, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 9, Փարիզ, Imprimerie de Navarre, 1935. նաեւ՝ Արտաշէս Յարութինեան, *Արձակ էջեր եւ քերթաւանքներ*, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 10, Փարիզ, Imprimerie de Navarre, 1937:

համար: Նկատի ունենալով ուրեմն օրուան պահանջները, *Նահապակ գրագետներու բարեկամներ* հրատարակչական մարմինը նպատակայարմար կը գտնէ ինքզինքը կոչել ասկէ յետոյ

ՀԱՅ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

իր գոյութեան տալով անշի ընդհանուր եւ ընդարձակ իմաստ մը: Առանց երբեք շեղելու իր հիմնական նպատակէն, կ'ընդարձակէ իր գործունէութեան դաշտը, եւ կ'առաջադրէ հրատարակել նաեւ երիտասարդ կամ տարեց, *կենդանի* հեղինակներու գործերն եւս, պահանջին եւ իր կարելիութիւններու սահմանին մէջ²⁵:

Հին անդամներէն Վրացեանի, Պարսամեանի, Գրիգորեանի եւ Նար-դունիի կողքին, յայտարարութիւնը ստորագրած են նոր անդամները՝ Հրաչ Սարգիսեան եւ Արշալոյս Խանէտանեան:

Անունի փոփոխութենէն ետք, հրատարակչականը լոյս ընծայած է *Արդի հայ գրականութիւն* եռահատոր շարքը, որ կ'ընդգրկէր Սփիւռքի եւ Հայաստանի գրականութեան նուիրուած ժողովածուներ: Շուշանեանի վերո-յիշեալ գրառումը Սփիւռքի գրականութեան երկրորդ հատորին առիթով նաեւ քննադատութիւն մը կը պարունակէր.

Փոխած են միութեան սկզբնական անունը, շեղած նպատակէն, ընդգրկած աշ-խատանքի էն դիրին եղանակները,- յանգելու համար այս սնանկութեան:

Արդի հայ գրականութիւն, - Աւելի քան քառասունըհինգ անուններ, այլ հազիւ տասնըհինգ հոգի, որ իրապէս արժանի ըլլան ժողովածուին մաս կազմելու²⁶:

Նոյն հատորի նախաբանին մէջ, հրատարակիչները կը յայտնէին, թէ կարգով լոյս պիտի տեսնէին Սրմաքէշխանլեանի, Չրաքեանի եւ Սեւակի հատորները, որոնցմէ միայն լոյս տեսած են Սրմաքէշխանլեանին (1942) եւ Սեւակին (1946) նուիրուածները²⁷: Անոնք անլցուցած են, թէ այնուհետեւ

²⁵ *Արդի հայ գրականութիւն (ժողովածու)*, Ա. հատոր. *արքայասահմանի գրողներ*, «Հայ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 11, Փարիզ, տպարան «Արաքս», 1939. նաեւ՝ *Արդի հայ գրականութիւն (ժողովածու)*, Բ. հատոր. *արքայասահմանի գրողներ*, «Հայ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 12, Փարիզ, տպարան «Արաքս», 1941. նաեւ՝ *Արդի հայ գրականութիւն (ժողովածու)*, Գ. հատոր. *արքայասահմանի գրողներ*, «Հայ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 13, Փարիզ, տպարան «Արաքս», [1944]: Վերջին հատորը թուագրած ենք հիմնուելով անոր ետեւի կողքը տպուած հաշուեկշիռին վրայ, որ կը ներկայացնէ 1 Յունիս 1942-30 Ապրիլ 1944 հաշուետւութիւնը, ուր ներառուած է 13րդ հատորի տպագրութեան ծախսը: Ասիկա կը փաստէ, որ անյայտ պատճառներով, թերեւս նիւթերը մէկտեղելու դժուարութեամբ, վերջինս լոյս տեսած է 14րդ՝ Սրմաքէշխանլեանին նուիրուած հատորէն ետք: 1942ին լոյս տեսած հատորը հաւանաբար տպուած է տարուան առաջին կէսին, քանի որ անոր տպագրութեան ծախսերուն ակնարկութիւն չկայ հաշուետւութեան մէջ:

²⁶ «Վազգէն Շուշանեանի օրագիրը», էջ 9:

²⁷ Օտեան, «Նահապակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 9, Փարիզ, Imprimerie de Navarre, 1935. նաեւ՝ Արտաշէս Յարութիւնեան, *Արծակ էջեր եւ*

կարգ մը հեղինակներու սպառած գործերը մատենաշարին մաս պիտի կազմէին եւ թուարկած են արեւմտահայ ու արեւելահայ 14 անուններ²⁸: Այդ ցանկէն միայն յոյս տեսած են Գարեգին Սրուանձտեանցի²⁹ եւ Եղիա Տէմիրճիպաշեանի հատորները³⁰ (վերջինիս գործերը երբեք առանձին գիրքով հաւաքուած չէին): Վրացեան վկայած է, որ «Փարիզի հայ գաղութի խամրումով, այս ընկերակցութեան եւս վերջ տրուեց եւ գրքերի մնացորդը փոխանցուեց Համազգային Մշակութային Ընկերութեան»³¹:

Շուշանեանի գրական ստեղծագործութեան մասին, Վրացեան արձանագրած է տողեր, որոնց ցոլացումը կը տեսնենք իրեն ուղղուած նամակներուն մէջ.

Հիանալի հայերէն էր գրում, ինքնատիպ ոճ, ճոխ երեակայութիւն, ասելու բովանդակալից խորք ու ձեւ: Երկարապատում էր, երբեմն շատախօս լինելու աստիճան, մտքերն ու պատկերները յորդում էին նրա գրչից, եւ ինչ որ ասում էր՝ անկեղծ էր, իսկ անկեղծութիւնը առաջին պայմանն էր ոչ միայն կեանքի յարաբերութիւնների մէջ, այլեւ գրականութեան եւ արուեստի գործերում³²:

1993ին, հայրենի վաղամեռիկ գրականագէտ Սարգիս Փանոսեան (1955-94) ուսումնասիրած է Վրացեան-Շուշանեան նամակային թղթածրարը եւ հրատարակութեան պատրաստած՝ ՆԳԲի առնչուող եօթը նամակ (Թ., Ժ., ԺԱ., ԺԴ., ԺԹ. Ի. եւ ԻԱ.), որոնք խորհրդահայ ուղղագրութեամբ յետմահու յոյս տեսած են՝ անոր ներածական ուսումնասիրութեամբ ու ծանօթագրութիւններով, *Նորք* հանդէսին մէջ³³: Չորս նամակ (ԺԳ., ԺԵ., ԺԶ.

քերթումներ, «Նահատակ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 10, Փարիզ, Imprimerie de Navarre, 1937. նաեւ՝ Եր. Սրմաքէշխանլեան (Երուխան), *Պատմութեան ժողովրդական կեանքէ*, «Հայ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 14, Փարիզ, տպ. Տէր Յակոբեան, 1942. նաեւ՝ Ռուբին Սեւակ, *Բժիշկին գիրքէն փրցուած էջեր եւ քերթումներ*, «Հայ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 15, Փարիզ, տպ. Արաքս, 1946:

²⁸ Արդի հայ գրականութիւն, Բ. հատոր, էջ 2:

²⁹ Գարեգին Սրուանձտեանց, *Համով-հոյով*, Ա. հատոր, «Հայ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 16, Փարիզ, տպ. Արաքս, 1949. Նոյն, *Համով-հոյով*, Բ. հատոր, «Հայ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 17, Փարիզ, տպ. Արաքս, 1950:

³⁰ Եղիա Տէմիրճիպաշեան, *Արձակ էջեր, նամակներ, քերթումներ*, «Հայ գրագէտներու բարեկամներ» մատենաշար թիւ 18, Փարիզ, տպ. Արաքս, 1955:

³¹ Վրացեան, էջ 220: Ընկերութեան 20 տարուան գործունէութեան հաշուետուութիւնը տե՛ս՝ Սկրտիչ Պարսամեան, «Քսանամեայ բարոյական եւ նիւթական համարատուութիւն «Հայ գրագէտներու բարեկամներ» հրատարակչական ընկերութեան», *Հայրենիք*, 12 Յունիս 1949, էջ 1-2:

³² Վրացեան, էջ 218:

³³ Սարգիս Փանոսեան, «Վազգէն Շուշանեանը եւ «Նահատակ գրագէտներու բարեկամներ» ընկերակցութիւնը», *Նորք*, 3:1996, էջ 146-48. նաեւ՝ «Վազգէն Շուշանեանի նամակները Սիմոն Վրացեանին», *Նորք*, 3:1996, էջ 148-52:

եւ ԺԹ.) լոյս տեսած է 2009ին *Բազին* հանդէսին մէջ՝ առանց ներածութեան կամ ծանօթագրութիւններու³⁴:

Ներկայ հրապարակումը կը ներկայացնէ մեր օրերուն հասած Սիմոն Վրացեան-Վազգէն Շուշանեան ամբողջական թղթածրարը՝ 21 նամակ, ինչպէս եւ Ը. նամակին բովանդակած հարցումներուն Վրացեանի պատասխանները: Նամակները լոյս կը տեսնեն նոյնութեամբ:

Ա.

13 Մարտ 1927 Մամիրօլ

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,

Ստացայ ձեր 8 [Մարտ] թուակիրը: Շնորհակալ եմ Ձեր աշխատակցութեան հրաւերին համար³⁵: Ընկերվարական երիտասարդական շարժման մասին դժբախտաբար անհրաժեշտ նիւթերը չունիմ: Անտարակոյս երիտասարդներու միջազգայինը պարբերական հրատարակութիւններ ունի բայց այստեղէն դժուար է ձեռք բերել: Ծանօթ եմ ֆրանսական երիտասարդական շարժման ուրին [sic] չարժէր յօդուած մը գոհել: Ի հարկէ կարելի է Ձեր ցանկացած նիւթի մասին յօդուած մը գրել բայց կ'ըլլայ վերիվարոյ. պիտի աշխատիմ աղբիւրներ փնտռել: Նիւթը զիս ալ շատ կը շահագրգռէ բայց իմ հետեւած պարբերականներու մէջ մեծ բան մը չիկայ:

«Դրօշակ»ի³⁶ Մայիսի թիւին համար պիտի ղրկեմ յօդուած մը՝ Յունուարի, Փետրուարի, Մարտի եւ Ապրիլի ընկերվարական կեանքի մասին³⁷: Մինչեւ այդ փոքրիկ յօդուած մըն ալ Աշխատանքի Միջազգային Գրասենեակի մասին³⁸:

«Դրօշակ»ի No. 3ը տակաւին չստացանք հոս³⁹: Կ'երեւի ընկերուի Յակոբեանը⁴⁰ դարձեալ Վալսպըրը⁴¹ ղրկած է զայն, թէւ իրեն ղրկեցի նոր հասցէս խնդրելով որ հինը փոխէ:

³⁴ «Վ. Շուշանեանէն երկու նամակ՝ Ս. Վրացեանին», *Բազին*, 2:2009, էջ 38-42. նաեւ՝ «Վ. Շուշանեանէն եւս երկու նամակ՝ Ս. Վրացեանի», *Բազին*, 3:2009, էջ 54-57:

³⁵ Սիմոն Վրացեան *Դրօշակի* խմբագիրն էր:

³⁶ *Դրօշակ*, Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնաթերթ (1891-1914, 1925-33, 1969-96՝ «Ազգակ Ճարաթօրեակ-Դրօշակ» անունով, 1999էն մինչեւ օրս):

³⁷ Վազգէն Շուշանեան, «Ընկերվարական քրոնիկոն», *Դրօշակ*, Յունիս 1927, էջ 171-78:

³⁸ Վազգէն Շուշանեան, «Աշխատանքի միջազգային գրասենեակը», *Դրօշակ*, Մայիս 1927, էջ 143-46:

³⁹ Տե՛ս՝ Վազգէն Շուշանեան, «Ընկերվարական տարին», *Դրօշակ*, Մարտ 1927, էջ 76-82:

⁴⁰ Սաթենիկ (Սաթօ) Յակոբեան (1900-65), հանրային գործիչ: Ֆրանսահայ Կապոյտ Խաչի հիմնադիրներէն:

⁴¹ Շուշանեան 1923-26 ուսանած է այժմ Կարտան (Մարսէլի մօտ) գտնուող Վալսպըրի երկրագործական վարժարանին մէջ: Երկրորդ հանդիսացած է՝ 25 շրջանաւարտներու շարքին, ստանալով երկրագործական նախարարութեան պրոնզէ շքադրամը («Նորաւարտ հայ գիւղատնտեսներ», *Հայրենիք*, 10 Սեպտեմբեր 1926):

Քէֆիս մասին բարեհաճեր էիք հարցնել: Մենք, տաճկահայերս «քէֆ» ընել չենք գիտեր հետեաբար միշտ «քէֆերնիս խարափ»⁴² ա» բայց սիրով «կ'աշխատինք»:

Միշտ՝ ՎԱԶԳԷՆ Գ. ՇՈՒՇԱՆԵԱՆ

Բ.

1 Մայիս 1927 Մամիրօլ

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,

Ահա նոր վերջացուցի խոստացածս յօդուածը: Աշխատեցայ հնար եղածին չափ ամփոփ ըլլալ ու մանրամասնութիւններէ խուսափիլ՝ որովհետեւ ինծի կը թուի թէ ամէն ընթերցող մասնաւոր ճաշակ չունի նման յօդուածներ կարդալու: Աշխատեցայ նաեւ պարզ ըլլալ, դիւրահասկնալի, յաճախ կրկնելով շատ մը սովորական բաներ՝ որովհետեւ «Դրօշակ»ի ընթերցողներուն մեծ մասին մտաւորական մակարդակը կը պարտադրէ ատիկա: Շատ չի ծանրացայ ֆրանսական հատուածի համագումարին վրայ՝ որովհետեւ հայ աշխատաւորութիւնը այնքան ալ չի շահագրգռուիր ատով եւ յետոյ յօդուածը տեղեկագրական ըլլալէ կը դադրէր: Շնորհակալ պիտի ըլլամ եթէ գրէք առհասարակ Ձեր դիտողութիւնները: Ես կ'ուզեմ հասկնալի ըլլալ՝ դասակարգ մը ընկերներու զոր ես կը ճանչնամ (եթէ կարելի է ըսել մեր կուսակցական զանգուածին) որ գիտեմ «Դրօշակ» կը կարդան եւ որ չեն կրնար մարսել զուտ տեսական ծանր յօդուածներ: Կը խնդրեմ խորագիրը նոյնութեամբ պահել: Chronique-ին ճշգրիտ հայերէն համապատասխանը *քրոնիկոն* է կամ *օրալուրք*:

Միջազգայինի⁴³ քարտուղարութիւնը պարբերաբար կը հրատարակէ “Informations Internationales”ը⁴⁴: Պէտք է գրել՝ Int[ernationale] Ouv[rière] Soc[ialiste] 41 Stockerstrasse, Zurich հասցէով: Կը ստանա՞ք. ի՞նչ լաւ կ'ըլլար եթէ ստանայիք, մէկ օրինակ միայն ձեռքս անցաւ: Սուղ է՝ 30 զուիցերիական ֆրանք բաժնեգինը:

Յուլիսին կ'ըլլուէմ համառօտ կամ ընդարձակ ուսումնասիրութիւն մը գրել Ժօռճի մասին⁴⁵: Նիւթը երկու տարիէ ի վեր կ'որոճամ: «Դրօշակ»ը յարմար է նման նիւթերու:

Ընկերական յարգանքներով՝

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Գ.

4 Յունիս 1927 Մամիրօլ

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,

Ձեր Մայիս 27 թուակիրը շնորհակալութեամբ ստացայ: Ձեր յանձնարարութիւններէն մէկը ահա կատարեցի⁴⁶: Կը կարծեմ որ այս անգամ յօդուածս քիչ

⁴² Փուճ (թրքերէն):

⁴³ Կ'ակնարկէ Ընկերվար միջազգայնականին, որուն լիիրաւ անդամն էր Հ.Յ.Դաշնակցութիւնը:

⁴⁴ *Information Internationales* պարբերաթերթը լոյս տեսած է 1927-31ին:

⁴⁵ Ժան Ժոռէս (1859-1914).- ֆրանսացի նշանաւոր քաղաքական գործիչ ու հայասեր: Ֆրանսայի ընկերվարական կուսակցութեան պարագլուխներէն:

⁴⁶ Վազգէն Շուշանեան, «Ընկերվարական քրոնիկոն», *Դրօշակ*, Յուլիս 1927, էջ 203-10:

մը երկար եղաւ: Եթէ կ'յուզէք չափ մը տուէք ու անոր համեմատ շարժիմ: Երկտասարդական շարժման մասին նախկին յօդուածիս մէջ եղած ծանօթութիւնը կրկին կրնաք դնել: Հետաքրքրուողներուն միշտ կրնամ օգտակար ըլլալ՝ թէեւ կը վախնամ որ հետաքրքրուող չըլլայ:

Չարժէր զիս “Informations Internationales”-ի եւ կամ ուրիշ պարբերականներու բաժանորդագրել՝ որովհետեւ չորս ամիսէն կը վերջացնեմ այս վարժարանը եւ կու գամ Փարիզ: Մինչեւ այդ Ձեր ստացած համարը կրնաք դրկել, եթէ ծանօրալի չըլլայ:

Գալով՝ Ժոռէսի մասին գիրք մը գրելու Ձեր առաջարկին, երկար ատենէ ի վեր իմ ալ մտադրութիւնս էր՝ բայց հրաժարած էի՝ որովհետեւ հրատարակելը դժուար էր: Ուրեմն՝ պիտի աշխատիմ այդ գործին՝ բայց միայն այստեղը աւարտելէ յետոյ⁴⁷:

Այստեղը կ'աւարտեմ Հոկտեմբերի 10ին՝ ամբողջ ամառը հոս եմ որով ու աշխատանքի⁴⁸: Կը փափաքէի տարի մը այդտեղ Ecole des hautes études sociales[ին]⁴⁹ կից Ecole de journalisme⁵⁰ յաճախել ու նաեւ հետեւիլ *Սօրպօնի* որոշ դասախօսութիւններու՝ բայց ձեռք քաշեցի: Միւս կողմէ՝ շատ մը յարմարութիւններու տեսակէտէն (ինքնագարգացման հնարաւորութիւններ, դասախօսութիւններ, գրադարաններ եւայլն) կ'ուզեմ տարիս Փարիզ անցընել որով պիտի աշխատիմ Ս[էն] Միշէլի մօտ՝ Montroug[e]ի մետաղի գործարաններէն մէկուն մէջ (ուր նախապէս աշխատած եմ) աշխատանք ճարել⁵¹: Կը յուսամ որ պիտի յաջողիմ:

Կը բարեւեմ Ձեզ եւ յաջողութիւն կը մաղթեմ Ձեր աշխատանքներուն:

Ընկերական յարգանքներով՝
ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Դ.

11 Օգոստոս 1927 Մամիրօլ

Յարգելի ընկ. Վրացեան,

Ահաւասիկ Ձեր ուզած յօդուածը⁵²: Աշխատեցայ որքան կարելի է սեղմ ընել որպէսզի «քրօնիկոն»-ս շատ երկար չըլլայ: Կը խնդրեմ որ միւս մասէն հատուածներ կամ մասեր չի վերցնէք: Կ'աշխատիմ՝ ընկերվարական կեանքի մասին ամփոփ պատկեր մը տալ, այնպէս որ նոյնիսկ Պուլկարիոյ մասին այդ թռուցիկ նօթը կը լրացնէ պակաս մը ու կ'օգնէ որ յետագային եթէ անելի երկար գրեմ՝ ընթերցողը կարենայ մարսել, պատրաստուած ըլլայ:

Ընթերցողներուն համար դժուար է միակտուր, մէկ նիւթի մասին, երկար ու միապաղաղ յօդուածներ կարդալը: Ատոր համար է որ կ'աշխատիմ «քրօնիկոն»ը

⁴⁷ Ըստ երեւոյթին, Շուշանեան չէ իրագործած իր ծրագիրը:

⁴⁸ 1926-27ին, Շուշանեան ուսանած եւ աւարտած է Մամիրօլի (Պուրկոնյի շրջան) կաթնատնտեսական վարժարանը:

⁴⁹ Ընկերային բարձրագոյն ուսմանց վարժարան (Փարիզ):

⁵⁰ Լրագրութեան վարժարան:

⁵¹ Շուշանեան 1922-23ին աշխատած էր Ռընոյի ինքնաշարժներու եւ Մոնրուժի մետաղագործական գործարաններուն մէջ:

⁵² Վազգէն Շուշանեան, «Ընկերվարական քրօնիկոն», *Դրօշակ*, Օգոստոս 1927, էջ 238-43:

պատառներու վերածել: Խորագիրները կարելի է անել մեծ տառերով դնել: Մասէ մաս՝ այդ դադարները կը դիւրացնեն ընթերցումը: Հոգեբանական է: Յետոյ կը խնդրեմ որ աշխատիք զիս ազատել այդ բազմաթիւ վրիպակներէն: Վերջինին մէջ բաց ինկած տողեր կային, նոյնիսկ հատուած մը եթէ չեմ սխալիր:

Ժողովի գիրքը դեռ չեմ սկսած գրել: Քննութիւններ ունիմ ու յետոյ Սեպտեմբերին պէտք է ելլի քննութիւններս պատրաստեմ ու մտատանջութիւններ: Պիտի սկսիմ այստեղը աւարտելէս յետոյ:

Կը բարեւեմ Ձեզ եւ կը մաղթեմ յաջողութիւն ձեր աշխատանքներուն:

Յարգանքներով՝
ՎԱՉԳԷՆ

Ե.⁵³

V. Chouchanian
33 Rue des écoles
Paris (5e)

17 Յուլիս 1928
Փարիզ

Սիրելի ընկ. Վրացեան,
Մեր ընկերներէն Յովի[աննէս] Մահտեսեանը որ այս տարի յաջողութեամբ կ'աւարտէ Վալապրի երկր[ագործական] վարժարանը՝ 1928-29 տարեշրջանին պիտի յաճախէ Մամիրոյի կաթնատնտեսական վարժարանը: Աւարտելէ յետոյ, ինչպէս մեր միւս ընկերները՝ Սիսակը⁵⁴ եւ Գարեգին Սարգիսբէգեանը⁵⁵, կրնայ ապահովաբար, իր կեանքը լաւագոյն կերպով շահիլ եւ միւս կողմէն՝ գործնական եւ փորձառու պանրագործ-կաթնատնտես մը դառնալ: Մահտեսեանը, անշուշտ կը յիշէք, Լիօնի շրջ[անային] ժողովին՝ Կարտանի պատգամաւորն էր: Լուրջ եւ վստահելի տղայ մըն է[.] աշխատանքը սիրող եւ հաւասարակշռուած:

⁵³ Բացիկը հասցեագրուած է՝ Monsieur S. Veratzian

Poste Restante
Bagnes de Bigorre
(Basses-Pyrénées)

⁵⁴ Սիսակ Սիսեան՝ Շուշանեանի Արմաշի գիւղատնտեսական վարժարանի դասընկեր: 1926ին, միասին աւարտած են Վալապրի երկրագործական վարժարանը, իսկ յետոյ՝ միասին ուսանած են Մամիրոյի մէջ («Նորաւարտ գիւղատնտեսներ»։ «Գաղութներ», *Հայաստանի կոչնակ*, 11 Սեպտեմբեր 1926, էջ 1306): Շուշանեան իր «Անկարելի օրագիր» գործը (*Յուսաբեր*, 1930) ձօնած է Ս. Սիսեանին. «Սիսակին՝ որ անձնուէր ընկեր է եւ քաջ կուսակցական, այս դառնութեամբ թաթխուած էջերը՝ ի յիշատակ մեր երկարամեայ բարեկամութեան, մեր թշուառութեան՝ որ կիսած ենք միասին, մեր անզօր ուրախութիւններուն եւ մեր խանդավառութեանց որ պէտք չէ մաշին բնաւ, որքան որ կեանքը դժուար ըլլայ, դառն...» (Վազգէն Շուշանեան, «Անկարելի օրագիր», *Յուսաբեր*, 28 Փետրուար 1930, էջ 2):

⁵⁵ Գարեգին Սարգիսբէկեան (1888-1953) եղած էր սպայակոյտի պետը Փետրուարեան ապստամբութեան ընթացքին: Այնուհետեւ, հաստատուած է Ֆրանսա:

Թէեւ միջակ մտաւորական կարողութեան տէր⁵⁶ բայց հաւատարիմ դաշնակցական, ահա՛ երկու տարիէ շուրջ՝ քարտուղարն է Կարտանի մեր ենթակնմիտին: Վերջին երկու տարին՝ *Վալապրի* մէջ նիւթական դժուար պայմաններու մէջ կ'ուսանէր: Ս[եպուի] Ստեփանեանի⁵⁷ եւ Լ[եւոն] Բաշալեանի⁵⁸ միջոցաւ յաջողած էի որոշ չափով օգտակար ըլլալ իրեն: *Մամիրօ*ի դասընթացքը երկու վեցամսեայ է առանց արձակուրդի: Ինծի կը թուի թէ ուսանողներու յատուկ Ձեր քով գտնուած գումարէն՝ կ'արժէ որ 300 ֆր. ամսական յատկացնէք իրեն: Զուր տեղը ծախսուած չըլլար: Հոս՝ ես դիմեցի արդէն ընկ[եր] Շաւարշին⁵⁹: Շատ կը խնդրեմ որ դուք որ կը ճանչնաք Մահտեսեանը, Ձեր ազդեցութիւնը գործ դնէք որպէսզի դիմումս չի մերժուի: Յամենայն դէպս կը խնդրեմ որ անմիջապէս պատասխանէք որովհետեւ դեռ չէ դիմած նախարարութեան ու կը սպասէ ինծմէ պատասխանի մը: Շատ շնորհակալ կ'ըլլամ եթէ չի մերժէք: Ձեր յօդուածաշարքը կարդացի⁶⁰: Ինչո՞ւ այդքան անարդար էք ընկ[եր] Ահարոնեանի հանդէպ⁶¹: Իր վերջին գործերը՝ «Ճամբորդ»ը⁶², «Իմ գիրք»ը⁶³ եւայլն որակով անհամեմատ լաւ են առաջիններէն, շատ աւելի լաւ: Որքան ալ ժամանակը զտէ ու հինցնէ իր գործը՝ այսուհանդերձ էջեր ունի որոնք բացառիկ գեղեցկութիւն մը ունին («Արիւնստ թթխմոր»ը, «Խայ»ը, եւայլն)⁶⁴: Ժամանակը

⁵⁶ Յովի. Մահտեսեան բանաստեղծութիւններով աշխատակցած է *Հայրենիք* ամսագրի Հոկտեմբեր եւ Դեկտեմբեր 1928ի թիւերուն:

⁵⁷ Սեպուի Ստեփանեան (1881-1944), եգիպտաբնակ գիւղատնտես, հրապարակագիր:

⁵⁸ Լեւոն Բաշալեան (1868-1943), արձակագիր, հանրային գործիչ: 1920ականներուն հաստատուած է Փարիզ, ուր անդամակցած է Հայկական բարեգործական ընդհանուր միութեան:

⁵⁹ Շաւարշ Միսաքեան (1883-1957), լրագրող, հանրային գործիչ: Փարիզի *Յառաջ* օրաթերթի հիմնադիր ու խմբագիր (1925-57):

⁶⁰ Շուշանեան ակնարկած է Վրացեանի յօդուածաշարքին (Ս. Սուրեան, «Գաղութահայ գրականութիւնը եւ Հայաստան (գրական խոհեր)», *Հայրենիք*, 23, 24, 26, 27, 28, 29 Յունիս 1928): Ս. Սուրեան ծածկանունը կը թուի բխած ըլլալ Վրացեանի Ս. *Մասուրեան* վաղաճանօթ ծածկանունէն, որ գործածուած է այս յօդուածաշարքէն անմիջապէս ետք տպուած յօդուածին մէջ (Ս. Մասուրեան, «Հայ որբերը եւ խորհրդային կառավարութիւնը. «հերթական պրովոկացիան», *Հայրենիք*, 1 եւ 3 Յուլիս 1928): Ս. Սուրեան ծածկանունը չկայ Յովակիմեանի բառարանին մէջ (տե՛ս՝ Բախտիար Յովակիմեան, *Հայոց ծածկանունների բառարան*, Երեւանի պետական համալսարանի հրատ., Երեւան, 2005):

⁶¹ Աւետիս Ահարոնեան (1866-1948).- արձակագիր, քաղաքական գործիչ:

⁶² Աւետիս Ահարոնեան, *Ճամբորդը (հայրենի գրոյցներ)*, «Հայրենիք» տպարան, Պոսթըն, 1926:

⁶³ Աւետիս Ահարոնեան, *Իմ գիրքը, հայ. Ա. Մանկութիւն*, Imprimerie de Navarre, Փարիզ, 1927:

⁶⁴ Տե՛ս՝ Ղարիբ [Աւետիս Ահարոնեան], *Ազգայութեան ճանապարհին. պատկերներ հայ յեղափոխական կեանքից, Ա. գրքոյկ, Դաշնակցութեան տպարան, Ժըննե, 1903*:

կուտար արդէն այդ հարուածները որ դուք այնքան անգթութեամբ շռայլած էիք իր ծեր գլուխին⁶⁵:

Կը ներէք որ Ձեր հանգիստը խանգարեցի: Յարգանքով՝ ՎԱԶԳԷՆ

Զ.⁶⁶

V. Chouchanian
33 Rue des écoles
Paris (5e)

25 Յուլիս 1928
Փարիզ

Սիրելի ընկ. Ս. Վրացեան,
Ձեր 21 Յուլիս թուակիր բացիկը ստացայ. շնորհակալ եմ որ շուտով պատասխանած էք: Կը ներէք որ կրկին անհանգիստ կ'ընեմ Ձեզ: Բ[աշալեան]ի պատասխանէն կախում ունի՝ Մահտեսեանի դիմելը՝ դպրոց ընդունուելու համար կամ ոչ: Մեծ բան մը չէ. տարի մը միայն ամսական 300-350 ֆր. կամ քիչ մը պակաս: Կը կարծեմ որ ընկ[եր] Շաւարշին մօտ դեռ դրամ կայ այն գումարէն, իսկ եթէ ըլլայ իսկ, կրնաք խոստանալ՝ գալ տարուան համար զալիք գումարէն՝ Մահտեսեանին ի հաշիւ գումար մը տալով՝ որպէսզի կարենայ փոխադրուիլ ու առաջին ամիսը անց[ը]նել: Ոչ թէ հիմա հապա երկու ամիսէն (Մամիրօյի տարեշրջանը կը սկսի Հոկտեմբերին): Շաւարշը շատ կողմնակից չի թուիր: Ամէն տեղ՝ ճառասաններու եւ էջ մրոտողներու կուտան: Ի՞նչ կայ որ, անգամ մըն ալ խոնարհ տղայ մը թո՛ղ օգտուի: Եթէ դուք սրտանց ուզեք՝ կը յուսամ որ կը յաջողի: Եթէ խօսք տաք յաջողցնել՝ ես իրեն կը գրեմ որ դիմէ: Ո՛չ մէկ կտակէ կամ հիմնադրամէ՝ մեզի խեր չկայ: Մեր տղոցը չեն տար: Բարակի հոտառութեամբ կը ճանչնան դաշնակցականը դեռ հեռուէն:

Սպասելով Ձեր դրական պատասխանին ու ցանկալով առողջութիւն:

Ձերդ՝ ՎԱԶԳԷՆ

Է.

21 Նոյեմբեր 1928

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,
Մահտեսեանը կրկին գրեր է ինծի եւ կ'ըսէ որ եթէ կարելի չըլլայ կարգադրութիւն մը ընել ստիպուած պիտի ըլլայ դպրոցը ձգել: Անցեալները Շաւարշը կ'ըսէր որ երեք ամսուան համար առաքում մը կրնայ ընել: Շատ կը խնդրեմ որ

⁶⁵ Տե՛ս՝ Ս. Սուրեան, «Գաղութահայ գրականութիւնը», *Հայրենիք*, 24 Յունիս 1928, էջ 3. «Այդպէս էր առաջ այդպէս է այժմ: Ահարոնեանը չի փոխուել, մինչդեռ հայ կեանքը փոխուել է հիմքից»:

⁶⁶ Բացիկը հասցէագրուած է՝ Monsieur
S. Veratzian

7 avenue de la Fontaine Ferrugineuse 7
Bagneres de Bigorre

կարգադրություն մը ընէք, որպէսզի տղան չստիպուի վերադառնալ: Լերան վրայ տեղ մըն է. մարդ որ նեղ մնայ՝ հայու շունչ չկայ⁶⁷: Ներփակ քանի մը բացիկներ կան, մէկը Ձեզի ուղղուած, միւսները ընկ. Շանթին⁶⁸ եւ Խատիսեանին⁶⁹: Կը խնդրեմ իրենց յանձնել:

Յարգանքով՝ ՎԱՉԳԷՆ

Ը.⁷⁰

Haratch
235 Rue de Faub. St. Martin
Paris (10e)

Փարիզ 4 Սեպտեմբեր 1929

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,

«Յառաջ»ը բացած է հարցարան մը⁷¹ գաղթահայ երիտասարդ գրականութեան շուրջ ու կը խնդրէ որ դուք ելըս [sic] պատասխանէք յետագայ հարցումներուն:

1° 1914էն ի վեր բազմաթիւ երիտասարդ գրողներ եկած են: Գաղթահայ թերթերն ու պարբերականները մեծ չափով տեղ կուտան անոնց գրական արտայայտութիւններուն: Ըստ ձեզ՝ որչափով մնայուն արժէք կը ներկայացնէ երիտասարդներու կողմէ մշակուած այդ գրականութիւնը: Կարելի՞ է գայն բնական շարունակութիւնը համարել նախապատերազմեան հայ գրականութեան: Եթէ այո՝ որչափով եւ ինչո՞ւ համար: Եթէ ոչ՝ հինին եւ նորին միջեւ գոյութիւն ունեցող խզումը ինչպէ՞ս կարելի է բացատրել:

2° Ի՞նչ բնորոշ յատկանիշեր, բացասական եւ դրական գծեր ունի այդ նոր գրականութիւնը՝ բաղդատած հինին: Ընդհանուր առմամբ միթէ ան կը պատասխանէ՞ պարելու անխախտ կամք ունեցող ժողովուրդի մը պահանջներուն եւ մտահոգութիւններուն:

3° Որո՞նք են ըստ ձեզ՝ այն երիտասարդ գրողները որ լաւագոյն կերպով կը ներկայացնեն այդ գրականութիւնը:

⁶⁷ Մահտեսեանի մասին ուրիշ տեղեկութիւն չունինք: 1937ին, Քոնկո էր (Ափրիկէ), ուրկէ բանաստեղծութեամբ մը աշխատակցած է Պուկկարիոյ *Ազար խօսք* օրաթերթին («Հայաստանին», *Ազար խօսք*, 28 Մայիս 1937):

⁶⁸ Լեւոն Շանթ (1869-1951).- գրագէտ, մանկավարժ, քաղաքական գործիչ: Պէյրուսի Հայ ճեմարանի համահիմնադիր եւ առաջին տնօրէն (1930-51): 1920ականներուն ապրած է Փարիզ:

⁶⁹ Ալեքսանդր Խատիսեան (1874-1945).- քաղաքական գործիչ, Հայաստանի Հանրապետութեան երկրորդ վարչապետ (1919-20):

⁷⁰ Նամակը գրուած է *Յառաջ*ի նամակաթուղթին վրայ:

⁷¹ Հոկտեմբերի վերջերուն, *Յառաջ* սկսած էր հրատարակել Յ.Զ.Սիրունիի յօդուածաշարքը «Գրական ասուլիս» վերտառութեամբ եւ ««Յառաջ»ի հարցարանին աղթի» ենթախորագրով, եւ խմբագրական ծանօթութիւն մը նշած է, թէ «հարցարանը պիտի հրատարակենք առանձին» (Յ.Զ.Սիրունի, «Սերունդը որ գնաց», *Յառաջ*, 27 Հոկտեմբեր 1929. նաեւ՝ «Սերունդը որ չեկաւ», *Յառաջ*, 3 Նոյեմբեր 1929. նաեւ՝ «Քանի մը գիծեր սերունդէն որ կայ ու չկայ», 10 Նոյեմբեր 1929. նաեւ՝ «Քանի մը դէմքեր որ կը բանան սերունդը», *Յառաջ*, 17 Նոյեմբեր 1929): Սակայն, հարցարանը լոյս տեսած չէ, իսկ «Գրական ասուլիս»ն ալ չէ շարունակուած:

Սպասելով պատասխանի եւ կանխայայտ շնորհակալութեամբ
Յարգանքներով՝ ՎԱԶԳԷՆ
ՇՈՒՇԱՆԵԱՆ

Թ.⁷²

23 Նոյեմբեր 1929
Փարիզ

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,
Ահա նամակը երկրորդ անգամ ըլլալով: Ինձ համար հանելուկ մնաց սակայն
միւս նամակին կորուստը: Հաւանաբար պիտի գտնէք զայն եթէ ընկ[եր] Հա-
նըմեանի⁷³ կամ միւս սեղաններուն շուրջ փնտռուիք մը կատարել տաք:
Միւս նամակը հրաժարեցայ գրել՝ ձեր նամակը չխաչաձեւելու համար: Ի՞նչ
հարկ քանի որ դուք գրած էք արդէն. կը սպասենք պատասխանի:
Ադիթէն օգտուելով ձեզ կրնամ իմացնել որ Վիեննայի յարգելի մատենադարա-
նապետը⁷⁴ արտագրութիւններ դրկած է որոնց [մէկ] մասը կը պատկանի Մուշի
Գեղամին⁷⁵: Բարի մարդը շփոթեր է երկու Գեղամներն⁷⁶ ու իրենց ոճը՝ հակա-
ռակ մեր յստակ նամակներուն: Արտագրած է նաեւ Գեղամ Բարսեղեանէն⁷⁷
կարգ մը կտորներ:

Ձերդ՝ ՎԱԶԳԷՆ

Ժ.⁷⁸

Փարիզ 26 Դեկտեմբեր 1929

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,
Քանի մը օր առաջ ընկ. Վ[արդան] Սարգսեանէն (Պրիւսէ)⁷⁹ նամակ մը ստա-
ցայ՝ ի պատասխան Ն.Գ.Բ.ի դիմումին տիար Վ[ահան] Խօրասանճեանին
մօտ: Յայտնելէ յետոյ որ տիար Խօրասանճեանը Պրիւսէ պիտի ըլլայ յառաջի-
կայ ամսու կէսերուն՝ կ'ըսէ որ յարմար չէ դատած մեր նամակը դրկել Եգիպտոս
եւ մեր դիմումի յաջողութեան համար եւ ան վերապահած է զայն անոր վերա-

⁷² Այս նամակին առաջին հրատարակութեան համար, տե՛ս՝ Փանոսեան, «Վազգէն Շուշանեանի նամակները», էջ 149:

⁷³ Արտաւագդ Հանըմեան (1875-1945).- քաղաքական գործիչ, Հայաստանի Հան-
րապետութեան Պատուիրակութեան քարտուղար:

⁷⁴ 1920ին, հայր Ներսէս Ակինեան կարգուած էր Վիեննա Մխիթարեան միաբանու-
թեան մատենադարանի վարիչ (Հ. Պ. Տէր Պօղոսեան, «Հ. Ներսէս Վ. Ակինեան,
1883-1963», *Հանդէս ամսօրեայ*, 10-12:1963, էջ 451-52):

⁷⁵ Գեղամ Տէր Կարապետեան (Մշոյ Գեղամ, 1865-1918).- արեւմտահայ արձակա-
գիր, օսմանեան հանրային գործիչ:

⁷⁶ Կ'ակնարկել Մշոյ Գեղամին եւ Գեղամ Բարսեղեանին:

⁷⁷ Գեղամ Բարսեղեան (1874-1915).- արեւմտահայ արձակագիր: Մեծ Եղեռնի զոհե-
րէն:

⁷⁸ Նամակը գրուած է Koubok Barի (հասցէ՝ Place de la Sorbonne) նամակաթուղթի
վրայ: Նամակին առաջին հրատարակութեան համար, տե՛ս՝ Փանոսեան, «Վազ-
գէն Շուշանեանի», էջ 149-50:

⁷⁹ Վարդան Սարգսեան (1892-1978).- խմբավար եւ երգահան, Կոմիտասի հինգ
սաներէն մէկը: Այդ ժամանակ, Վահան Խօրասանճեանի քարտուղարի պաշտօ-
նը կը վարէր Պրիւսէի մէջ:

դարձին: Չափազանց լաւատես է դիմումի արդիւնքի մասին եւ կը յուսայ որ կարետոր գումար մը կարելի պիտի ըլլայ ապահովել, քանի որ գործնական եւ շատ համակրելի է մեր ձեռնարկը: Այլեւ կ'աւելցնէ որ շատ արդիւնաւէտ պիտի ըլլայ մեր դիմումը եթէ դուք ալ անձնապէս գրէք տիար Խօրասանճեանին: Կը բարեւէ ձեզի մասնաւորապէս:

Անշուշտ կը յիշեմ որ դուք մեր վերջին ժողովին մէջ չուզեցիք գրել անձնապէս որոշ նկատումներով, բայց հիմա անտարակոյս պիտի ուզէք զիջիլ, քանի որ գործին յաջողութիւնը որոշ չափով կախում ունի ձեզմէ: Հիմա մանաւանդ երբ Զարդարեաններուն հետ⁸⁰ վերջնապէս համաձայնած ենք՝ կրնաք առաջարկել որ մեր առաջին հատորին ամբողջ ծախքը ստանձնէ, յետագային վերապահելով անշուշտ երկրորդ հատորին ծախքերուն համար մեր դիմումը: Եթէ կ'ուզէք կրնաք նաեւ գրել ընդհանուր ձեռով եւ ես՝ մեր յառաջիկայ ժողովէն յետոյ կը գրեմ մանրամասնօրէն, ինչպէս որ կ'ուզէք:

Այս նամակը կը գրեմ որովհետեւ դժբախտաբար կը վախճամ որ ձեր մեկնումէն առաջ առիթ չպիտի ունենամ ձեզ տեսնելու: Վաղը պիտի մեկնիմ՝ տասը տասներկու օրուան համար Rethel. կրնայ ըլլալ նաեւ որ մնամ: Եթէ չկարենամ երթալ վաղը կամ շաբաթ օր կը հեռախօսիմ [sic] ձեզ ու կը պայմանաւորուինք մեր յառաջիկայ ժողովին համար, այլապէս ձեզ կը մնայ ժողով հրաւիրել:

Գալով իմ անձնական խնդրիս ու մեր անցեալ օրուան խօսակցութեան՝ ինձ համար շատ ցաւալի է որ չպիտի կրնամ ձեզ տեսնել՝ մեկնելէ առաջ: Երկարօրէն կը գրեմ ձեզ՝ Պոսթըն, «Հայրենիք»ի⁸¹ խմբագրութեան հասցէով:

Միշտ Ձերդ՝ ՎԱՉԳԷՆ

ՇՈՒՇԱՆԵԱՆ

ԺԱ.⁸²

5 Յունվար 1929 [1930]⁸³

Յարգելի ընկ. Վրացեան,

Մեր վերջին ժողովը պարտք դրաւ վրաս որ Ձեր Մ[իացեալ] Նահանգներ մեկնումին առթիւ, բոլորին կողմէ կարգ մը յանձնարարութիւն-խնդրանքներ ընեն: Մտածեցի որ աւելի լաւ է որ գրաւոր ընեմ եւ նամակս ձեզ այդտեղ գտնէ:

Ուրեմն մեր ընկերները ջերմօրէն կը խնդրեն որ ձեր ճամբորդութեան ընթացքին, ո՛ր ալ ըլլաք, չմոռնաք աշխատիլ նաեւ մեր միութեան համար⁸⁴: Մասնաւորապէս կը խնդրեն սակայն՝

Ա) Կազմել Նիւ-Եօրքի մէջ եռանդամ յանձնախումբ մը, որ մեզ հետ անմիջապէս մտնէ հաղորդակցութեան: Բացատրել իրենց մեր գործը: Այս յանձնա-

⁸⁰ Կ'ակնարկէ գրագէտներ Ռաֆայէլ (1896-1985) եւ Հրաչ (1897-1986) Զարդարեաններուն՝ Ռուբէն Զարդարեանի երկու աւագ որդիները:

⁸¹ Հայրենիք, ամերիկահայ օրաթերթ (հիմնուած՝ 1899ին), 1991էն՝ շաբաթաթերթ:

⁸² Նամակը գրուած է ՆԳԲի նամակաթուղթին վրայ: Առաջին հրատարակութիւնը տե՛ս՝ Փանոսեան, «Վազգէն Շուշանեանի», էջ 148-49, ուր պահպանուած է 1929 տարեթիւը:

⁸³ Նամակին տարեթիւը ճշտած ենք ըստ նամակի բովանդակութեան. 1929 թուականը տարեթիւի սովորական սխալ մըն է, որ յաճախ կը պատահի տարուան փոփոխութեան սկիզբը: ՆԳԲը հիմնադրուած է Սեպտեմբեր 1929ին:

⁸⁴ Կ'ակնարկէ ՆԳԲին:

խումբը պիտի հսկէ մեր բոլոր գործերուն Մ[իացեալ] Նահանգներու մէջ: Որպէս հաւանական անդամներ ձեզ կ'առաջարկենք ընկերներ Յ[ակոբ] Խաշմանեանը⁸⁵ եւ Արամ Հայկազը⁸⁶:

Բ) Իւրաքանչիւր հայաշատ քաղաքի մէջ յարմար մարդիկ գտնել գրքերու սպառման համար ու յանձնախումբին հետ համախորհուրդ շուտով մեզ հասցնել այդ ընկերներու լիակատար ցանկն ու հասցէները:

Գ) Յանձնախումբին եւ այդ ներկայացուցիչ ընկերներուն շնորհիւ անմիջապէս ճշդել թէ իւրաքանչիւր քաղաքի մէջ մօտաւորապէս ո՞րքան նուիրատոմս կրնանք սպառել:

Դ) Մեզ դրկել Ռ[ուբէն] Զարդարեանի⁸⁷ խնդրոյ առարկայ գրութիւնը որքան կարելի է շուտ:

Ե) Նամակ մը ուղղուած Զարիէվին⁸⁸՝ ներկայացնելով մեր գանձապահը եւ քարտուղարը ու խնդրելով որ դիւրացնէ մեր աշխատանքը:

Ձ) Նամակ մը ուղղուած տիար Վ[ահան] Խօրասանճեանի⁸⁹ ծանօթ խնդրին առթիւ:

Յայտնելով կանխաւ շնորհակալութիւն ու սպասելով պատասխանի:

Ձերդ՝ ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Յ. Գ.- Գալով իմ անձնական «անկարեա»ներուն⁹⁰ ձեզ պիտի յիշեցնեմ կրկին հոդ գալու ցանկութիւնս ու պիտի խնդրեմ որ որեւէ կարգադրութիւն ընէք յառաջիկայ Օգոստոսին համար: Եթէ շուտով գրէք կը սկսիմ աչքերու բուժման⁹¹: Մինչ այդ պէտք է լրջօրէն աշխատիմ *թէզըս*⁹² ներկայացնելու համար: Տարաբախտաբար երկու ամիս է նիւթական դժուարութիւններու հետեւանքով հարկ եղածին չափով չկրցայ աշխատիլ: Յառաջիկայ ամիսներու ընթացքին՝ ամբողջովին պիտի նուիրուիմ դպրոցիս: Ատոր համար պէտք է գոնէ 800-900 ֆր[անք] մնայուն ամսական մը ունենամ: «Հայրենիք» ամսագրին դրկած ձեռագրիս⁹³ փոխարէն արդէն 60 տօլար ստացայ, որպէս կանխավճար: Վճարելէ

⁸⁵ Յակոբ Խաշմանեան (1888-1968).- ամերիկահայ մտաւորական, հանրային գործիչ:

⁸⁶ Արամ Հայկազ (Չէքէմեան, 1900-86).- ամերիկահայ արձակագիր:

⁸⁷ Ռուբէն Զարդարեան (1874-1915).- արեւմտահայ արձակագիր եւ խմբագիր: Մեծ Եղեռնի զոհերէն:

⁸⁸ Յովհաննէս Զարեան (1869-1945).- իրաւագէտ, բանասէր: Հոկտեմբերեան Յեղափոխութենէն ետք, հաստատուած է Փարիզ, ուր ամուսնացած է մեծահարուստ Աբրահամ Ղուկասեանի քրոջ աղջկան՝ Նունէ Բէգլարեանի հետ, եւ երկար տարիներ վարած՝ Ղուկասեանի հիմնած Imprimerie de Navarre բազմալեզու տպարանի տնօրէնութիւնը:

⁸⁹ Վահան Խորասանճեան (?-1945).- պելճիքահայ բարերար: Հովանաւորած է Մարսէլի Ս. Թարգմանչաց մայր եկեղեցւոյ շինութիւնը:

⁹⁰ Ատօրեայ մանր գործեր (թրքերէն):

⁹¹ Հաւանաբար կ'ակնարկէ այն իրողութեան, որ արգիլուած էր աչքերու վարակիչ *թրաքոմա* հիւանդութիւնը ունեցողներուն մօտքը Միացեալ Նահանգներ:

⁹² Ֆր. *thèse* (աւարտաճառ):

⁹³ Հաւանաբար կ'ակնարկէ «Օրերը գեղեցիկ չեն» գործի երկրորդ մասին (Վազգէն Շուշանեան, «Օրերը գեղեցիկ չեն», *Հայրենիք ամսագիր*, Բ. մաս (Ապերջանիկ

յետոյ *Մարսէլ* ճամբորդութեանս, սենեակիս եւ այլ մանր պարտքեր գրպանս 100 ֆր[անք] կը մնայ: Կը խնդրեմ, որ շուտով կարգադրութիւն մը ընէք եւ եթէ համաձայնին դրկել՝ թող փոխադրեն հեռագրով: Պարտքեր ունիմ ձեզ (700 ֆր[անք]), Գե[ւորնեանին]⁹⁴ (800) եւ ուրիշ ընկերներու: Եթէ նախորդ ամիսներու համար բան մը չընեն շատ գէշ կացութեան մը պիտի մատնուիմ: Ահա՛ թէ ինչու անձկութեամբ կը սպասեմ ձեր պատասխանին:

Վ.Շ.

ԺԲ.

11 Յունվար 1930 Փարիզ

Յարգելի՛ ընկ. Ս. Վրացեան,
Առանց սպասելու նամակիս պատասխանին, ահա՛ կրկին կը գրեմ ու կը ծանծ-
րացնեմ: Կը ներէք: Վերջին նամակս անշուշտ ստացած էք: Այս երկտողը կը
գրեմ ձեզմէ ջերմագին կերպով խնդրելու համար որ եթէ կարելի է մինչեւ այս
ամսու 20ը Հ[այ] Կ[արմիր] Խ[աչ]ի⁹⁵ կողմէ փոքր գումար մը դրկել տաք ինձ:
Եթէ սկզբունքով համաձայնած ըլլան տալ, երկու օր առաջ թէ երկու օր յետոյ,
մեծ տարբերութիւն չըներ: Կրնան *հեռագրով* դրկել ու անմիջապէս կարծեմ,
կամ մէկ երկու օրուան ընթացքին, այստեղ կը ստացուի:

Եթէ ձեզ յանձնեն ու դուք դրկէք լաւագոյնն է: Փոքրիկ երիտասարդական ար-
կած մը պատահեցաւ, բան մը որ պէտք չէ պատահէր, բան մը որ մինչեւ հիմա
չէ պատահած: Անշուշտ յուսահատելու բան չկայ բայց հաճելի ալ չէ: Եթէ կա-
րենաք բան մը ընել ուրեմն, դրկեցէք Շաւարշի հասցէին 235 Faubourg St.
Martin⁹⁶, որովհետեւ հասցէս պիտի փոխեմ:

Անշուշտ լաւ ճամբորդեցիք: Հին տեղեր, նախապէս ծանօթ մարդիկ ու փոխ-
ուած բաներ տեսաք: Ծամբորդութիւնը միշտ տեսակ մը փախուստ է առօրեա-
լէն, մեր ծանծրոյթէն եւ մեր սովորութիւններէն, թէեւ միշտ ամէն տեղ մարդ
միշտ ինքզինքը կը գտնէ, իր անխուսափելի *ինքզինքը* որուն հետ պատրաստ է
ապրիլ: - Հեռանա՛լ, հեռանա՛լ, մոռանա՛լ... կ'ըսէր բանաստեղծը⁹⁷: Ո՛ր հեռա-
նալ եւ ո՛ր յանգիլ սակայն, երբ ամէն տեղ մարդ իր *ինքզինքը* պիտի գտնէ:

Կանխայայտ շնորհակալութեամբ ու յարգանքներով՝

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

ԺԳ.⁹⁸

23 Փետրվար 1930

V. Ch.

մարդոց պատմութիւն), Փետրուար-Յուլիս 1930): Առաջին մասը լոյս տեսած էր
1929ին (Նոյն, «Օրերը գեղեցիկ չեն», *Հայրենիք ամսագիր*, Ա. մաս (Բարի մար-
դոց պատմութիւն), Յունիս-Հոկտեմբեր 1929):

⁹⁴ Լեւոն Գեւորնեան (1880-1965).- *Յառաջի* երկարամեայ վարչական պատասխա-
նատու եւ աշխատակից:

⁹⁵ Հայ Կարմիր Խաչ՝ այժմու Հայ Օգնութեան Միութեան սկզբնական անունը:

⁹⁶ *Յառաջի* խմբագրութեան հասցէն այդ տարիներուն:

⁹⁷ Կ'ականարկէ Վահան Տէրեանի «Մոռանա՛լ, մոռանա՛լ ամէն ինչ...» տողով սկսող
բանաստեղծութեան:

⁹⁸ Այս նամակին առաջին հրատարակութեան համար, տե՛ս՝ «Վ. Շուշանեանէն եր-
կու նամակ», էջ 38-40:

Յարգելի ընկ. Վրացեան,

Ձեզ գրելու համար կը սպասէի որ մեր գիրքը յանձնէինք տպարան: Տակաւին չենք յանձնած թէեւ բայց գրեթէ ամէն բան վերջացած է: «Տիար» Խորասանճեանը 5000 ֆր[անք]ը դրկեց շատ սիրալիր նամակով մը որ մեծ յոյսեր կը ներշնչէ ապագային համար: «Տիար» Զարեանը եւս մեզ ընդունեց շատ սիրալիր կերպով: Այլ յոյսեր ապագային համար: Չորեքշաբթի գիրքը պիտի տանիմ տպարան: Միայն թէ կ'ուզենք – վստահութիւն ներշնչելու համար «տիար» Զարեանին եւ «մերովսանն» քաւելու համար ուրիշներու մեղքը – փակագիծ B (Ամէն մարդ, առաւել կամ նուազ չափով կը քաւէ մէկ ուրիշին մեղքը. բոլորս մեր հայրերուն մեղքը, մեր սերունդը պիտի քաւէ «եղեր» ձեր սերունդին մեղքը) փակագիծ C (Ականջը խօսի «հընկեր» Խոնդկարեանին⁹⁹, եղբայր ի քինախնդրութիւն - որեւէ մէկուն հետ կարելի է եղբայրութեան եզր մը գտնել - որ կրնայ ուսերը թօթուել այս նախադասութեան առջեւ, փնտռել տէր-բային ու սխալի խնդիրը) ո՛րք revenons à nous moutons¹⁰⁰, ինչպէս պիտի ըսէր միւսը – առաջին գրքին համար գոնէ յարգել վճարման պայմանները: Ատոր համար կարծեմ պէտք պիտի ունենանք տակաւին 3000 ֆրանքի: Այդ երեք հազար ֆրանքը - հակառակ գործադրութեան եւ այլն եւ այլն ... - կը յուսանք որ պիտի կրնաք հայթայթել մեզ... այդտեղէն: Շուտով ուրեմն ձեզ պիտի դրկենք մեր նուիրատոմսերէն մաս մը, որպէսզի ձեր կազմած կամ կազմելիք յանձնախումբին միջոցաւ աշխատիք գտնոնք բաժնեւ: Որոշ հասցէ մը չունենալով՝ պիտի դրկենք «Հայրենիք»ին միջոցաւ: Ուրեմն Ն.Գ.Բ.ի կողմէ եւ յաղագս հայ գրականութեան expressement¹⁰¹ ձեզմէ կը խնդրուի՝

Ա) Տարածել դրկուած նուիրատոմսերը ու փոխարժէքը շուտով դրկել, որպէսզի կարենանք «ի կատար ածել» մեր խոստումը - Օ՛ր Խոնդկարեան, խոստում կը յարգեն եւ ոչ թէ կը կատարեն - գոնէ մինչեւ երկու ամիս:

Բ) Կազմել Նիւ-Եորքի յանձնախումբը ու մեզ դնել յարաբերութեան մէջ՝ իրենց հետ¹⁰²:

Գ) Մեր ձեռնարկին շուրջ երկու յօդուած գրել «Հայրենիք» շատ ազգօգուտ թերթին մէջ: Առանց առարկելու ձեր բազմազբաղ վիճակը, որովհետեւ ամէն մարդ միշտ բազմազբաղ է, պիտի ըսէր միւսը:

Ահա ինչ որ ունէի գրելիք Ն.Գ.Բ.ի մասին: Աւելցնեմ որ երկրորդ գրքին համար շուտով կարգադրութիւններ պիտի ընենք ու յարեմ (Օ՛ր my God!¹⁰³ բոլոր հնաբոյր բառերը գրչիս տակ կուգան այսօր) որ ընկերները շնորհակալութիւն կը

⁹⁹ Արշամ Խոնդկարեան (1888-1965).- քաղաքական գործիչ, հրապարակագիր: Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանի անդամ (1919-20) Ընկերվար յեղափոխական կուսակցութեան կողմէ, արդարութեան նախարար (1920): Յետագային՝ վտարանդի Ֆրանսա:

¹⁰⁰ Վերադառնանք մեր ոչխարներուն (ֆրանսերէն):

¹⁰¹ Յստակօրէն (ֆրանսերէն):

¹⁰² Յանձնախումբը հրապարակ իջած է Յունուար 1931ին:

¹⁰³ Աստուած իմ (անգլերէն):

յայտնեն որ Ն.Գ.Բ.ը չէք մոռցած ու կ'ըսեն որ - ինքզինքը միշտ պետք է գործօն նախագահի համարէ Ն.Գ.Բ.ի ու ըստ այնմ աշխատի - հակառակ ձեր բազում զբաղումներուն: Ու թո՛ղ հոգւոյն, որդւոյն եւ սուրբ հոգւոյն - միասնական երրորդութեան - օրհնութիւնը ձեր վրայ ըլլայ, ամէն...

* * *

Օօ՛ ձեր պզտիկ ու վտանգաւոր նախադասութիւնը - à part ça qu'est qu'il y a de nouveau? Mais rien, "à l'Est il y a rien de nouveau"¹⁰⁴. C'est toujours la même histoire. On marche à reculons et on propose... l'émancipation du peuple a...¹⁰⁵

Անշուշտ շատ մը ուրիշ մարդոց պէտք ունիմ քիչ մը լրջութեան. կը ներէք նամակիս «անլուրջ» ոճը: Վայե՛լ է միթէ ասիկա մարդու մը որ մերձ է երեսունի հրուանդանին եւ որ փառասիրութիւնը ունի օր մը չորրորդ դասակարգը ներկայացնելու Հայաստանի խորհրդարանին մէջ... իմա՛ խորհուրդներու համագումարին (It est ambitieux, le petit...)¹⁰⁶

Et puis vous avez tort de me prendre pour un bavard, vous savez et de me poser la dite question, peut-être je suis plus silencieux et plus fermé que les autres. Seulement j'ai ma manière à moi d'être silencieux et discret. Je dis souvent plus que je veux dire. J'ai la prétention d'avoir cette petite qualité, si c'est une qualité...¹⁰⁷

Est-ce que j'interprète mal votre question? Ça ne peut... Seulement comme les petites femmes qui écrivent des longues lettres pour ne dire rien et mettent l'essentiel dans un petit postscriptum, mais aussi... nous gardons le silence!¹⁰⁸

Donc, à l'Est il y a rien de nouveau...¹⁰⁹

Il y a des questions sans réponses et de réponses sans questions¹¹⁰ (խնդիրք կարդալու «Յուսաբեր»ի մէջ հրատարակուող գրքիս երրորդ մասին որոշ էջերը¹¹¹)

¹⁰⁴ «Արեւելքի մէջ նորութիւն չկայ»: Բառախաղ մըն է՝ 1929ին լոյս տեսած գերմանացի գրագէտ Էրիխ Մարիա Ռեմարքի (1898-1970) «Արեւմուտքի մէջ նորութիւն չկայ» (Ֆրանսերէն թարգմանութիւնը՝ «À l'Ouest, rien de nouveau») հակապատերազմական վէպի խորագրին հետեւողութեամբ:

¹⁰⁵ «Ասկէ զատ, ի՞նչ նորութիւն կայ: Ոչինչ, «Արեւելքի մէջ նորութիւն չկայ»: Միշտ նոյն պատմութիւնն է: Շարժելով յետընթաց, կ'առաջարկեն... ժողովուրդի ազատագրումը...» (Ֆրանսերէն):

¹⁰⁶ «Պզտիկը փառատենչ է» (Ֆրանսերէն):

¹⁰⁷ «Յետոյ, սխալ էք, երբ զիս շաղակրպարի տեղ կը դնէք, դուք գիտէք ճիշդ հարցումը դնել ինձի, թերեւս ես անելի լուռ եւ անելի ինքնամփոփ եմ, քան միսները: Միայն թէ ես իմ ձեռք ունիմ լուռ եւ զուսպ ըլլալու: Յաւակնութիւնը ունիմ այս պզտիկ արժանիքը ունենալու, եթէ արժանիք մըն է» (Ֆրանսերէն):

¹⁰⁸ «Ձեր հարցումը սխալ կը մեկնաբանեմ: Չի կրնար... Միայն ինչպէս պզտիկ կիները որ երկար նամակներ կը գրեն ոչինչ ըսելու համար եւ էականը կը մտցնեն փոքրիկ յետգրութեան մէջ, բայց նաեւ... մենք կը լռե՛նք» (Ֆրանսերէն):

¹⁰⁹ «Հետեւաբար, Արեւելքի մէջ նորութիւն չկայ» (Ֆրանսերէն):

¹¹⁰ «Առանց պատասխաններու հարցումներ կան եւ պատասխաններ՝ առանց հարցումներու» (Ֆրանսերէն):

որ խօսք կ'ըլլայ մարդու մը մասին որ սովորութիւն ունի իր ծանր ձեռքը դնելու մարդոց ուսին ու ըսելու - եւ առհասարակ, ի՞նչ կայ չկայ...):

Il y a des tristesses sans limites, tristesse de vivre dans une grande ville, tristesse d'aimer des gens qu'on ne doit pas aimer... tristesse de ne pas pouvoir haïr des gens qu'on doit haïr, tristesse d'être un sale petit bourgeois, un faux-intellectuel, un petit bonhomme sans importance, quoi!¹¹²

Que faire, que devenir?¹¹³ Պիտի ըսէր միւսը...

Ու յետոյ կը ներէք այս ֆրանսերէն տողերուն միամտութիւնը: Ձեզ յիշեցնելու համար է այս մեծ բոզը որ Ֆրանսան է: Tout de même, elle est gentille la Marianne, rieuse, avec son air moqueur, avec le petit train-train de sa vie, avec sa trahison...¹¹⁴

Ի դէպ փոքրիկ պատմութիւն մը: Եթէ արդէն գիտէք - Tant pis...¹¹⁵

Խօսքը կը վերաբերի ծերունի «Վագր»ին¹¹⁶ որ այն ատեն իշխանութեան գլուխ էր ու ժամանակ չունէր իր մարդատեցութիւնը որոճալու: Այսուհանդերձ մարդիկ կան որ ընդունակ են խանգարելու ամենէն հաւասարակշիռ մարդոց ջղախիճ դրութիւնը - Il me tape sur les nerfs¹¹⁷ - կ'ըսէ ֆրանսացին: Ուրեմն պզտիկ եւ աղտոտ ծերուկը որ կը կոչուի Զօպանեան¹¹⁸ - աւա՛ղ, աւա՛ղ եղբայր ի գրականութիւն - այնքան կը զգուեցնէ «Վագր»ը որ օր մը երբ մանկլաւիկը կը յայտարարէ զայն «Վագր»ը կը մրթմրթայ - Il me emmerde ce Tobanian¹¹⁹... Խեղճ Թօպանեան, որակեալն ցայլքոջի: Կը տեսնէք որ հակառակ ճեմարանական ջրլլալու¹²⁰ աղօտ ու աննշան ծանօթութիւններ ունիմ գրաբառի [sic] մասին -

¹¹¹ Վագգէն Շուշանեան, «Անկարելի օրագիր», *Յուսաբեր*, 28 Փետրուար-17 Յունիս 1930 (ընդմիջումներով):

¹¹² «Առանց սահմաններու տխրութիւններ կան, տխրութիւնը՝ մեծ քաղաքի մը մէջ ապրելու, տխրութիւնը՝ սիրելու այն մարդիկը, զորս պէտք չէ սիրել... տխրութիւնը՝ ապրել չկարենալու այն մարդիկը, որ պէտք է ապրել, տխրութիւնը՝ ըլլալու աղպոր մանր քաղքենի մը, կեղծ մտաւորական մը, փոքրիկ մարդ մը առանց կարեւորութեան, ի՞նչ» (ֆրանսերէն):

¹¹³ «Ի՞նչ ընել, ի՞նչ դառնալ» (ֆրանսերէն):

¹¹⁴ «Այսուհանդերձ, Մարիանը բարի է, խնդուն, իր ծաղրական հայեացքով, իր կեանքի մանր տաղտուկով, իր դաւաճանութեամբ» (ֆրանսերէն): Marianne (Մարիան)՝ Ֆրանսայի խորհրդանշական անունը:

¹¹⁵ «Աւելի վատ» (ֆրանսերէն):

¹¹⁶ Կ'ակնարկէ Ազգային Պատուիրակութեան նախագահ Պօլոս Նուպարին (1852-1930):

¹¹⁷ «Ջիղերս կը խանգարէ» (ֆրանսերէն):

¹¹⁸ Արշակ Զօպանեան (1872-1954).- Ֆրանսահայ գրագէտ, հանրային գործիչ:

¹¹⁹ «Այս Թօպանեանը զիս կը զայրացնէ» (ֆրանսերէն):

¹²⁰ Վրացեան շրջանաւարտ էր Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանէն:

ականջը խօսի Դուրեան (Սրբազան)ին¹²¹ եւ իր գրքին - *Ընթացք ի գրոց բարբառ...*¹²²

Գրաբառէն՝ Դուրեան, Դուրեանէն՝ յոբելեան¹²³...

Յոբելեանէն՝ յոբելեաններ¹²⁴...

Ça aussi, ça tape sur les nerfs...¹²⁵

Երէկ կը մտածէի հետեւեալը - ինչո՞ւ այս յոբելեանները: Իմաստութիւնը, տա-
ղանդն ու այլ ընդունակութիւններ բնատուր ու ընդոծին ձիրքեր են, հետեւա-
բար ո՛չ մէկ պարագայի տակ առանձին ուշադրութեան ու աշտուցեան արժա-
նի: Ինչ որ մարդ մը անելի բարձր կը դասէ միւսէն, այդ իր յարատեւ, վայրագ
ու անդուլ ճիգն է բարձրանալու, ամէ՛ն բան տալու եւ սրբագրուելու: Այդ իր յա-
րատեւ ու չարագործ աշխատանքն է: Եթէ այս այսպէս է ինչո՞ւ չտօնել օրինակ
որեւէ բանուորի մը, գիւղական ծեր ուսուցչի մը, ութսունամեայ արհեստաւորի
մը յոբելեանը եւ տօնել «մեծ» մարդոցը: Կը հասկնամ Դաշնակցութեան քա-
ռասնամեայ յոբելեանը: Ժողովրդի մը հաւաքական ճիգին, յուսահատ ընդդի-
մութեան, թափած տաք արիւնին յոբելեանը, որ կրնայ նոյնիսկ ինծի պէս «լիր-
ք»ի մը աչքերուն արտասուք բերել...

Բայց միւս յոբելեանները ո՛չ, այդ մասնաւոր ուշադրութիւնը կը զայրացնէ զիս...

* * *

Երկու բառ եւս: «Երիտասարդական արկած»ը կը վախճամ որ վատ մեկնած
էք, *aventure*¹²⁶ իմաստով պէտք է առնել, կը յիշէ՞ք «Սիրոյ եւ արկածի տղա-
քը»¹²⁷, այդպէ՛ս արկած:

- Տիկին Զաւօ Շանթէն¹²⁸, ձեռամբ Աշոտի¹²⁹, ստացայ խնդրոյ առարկայ գումա-
րը: Պայմանադրական չլլլալու համար կը վերապահեմ շնորհակալութիւն-
ներս: Պարտք մը եւս: Ամուր ուսեր պէտք է ունենալ ապրելու համար:

¹²¹ Եղիշէ արք. Դուրեան (1860-1930).- գրող ու բանասէր: Պոլսոյ հայոց պատրի-
արք (1909-10), Երուսաղէմի հայոց պատրիարք (1921-30):

¹²² Եղիշէ վրդ. Դուրեան, *Ընթացք ի գրոց բարբառ, Ա. տարի*, տպ. Յովսէփ Գա-
ւաֆեան, Կ. Պոլիս, 1880:

¹²³ Եղիշէ արք. Դուրեանի քահանայութեան յիսնամեայ յոբելեանը նշուած էր 25-28
Հոկտեմբեր 1929ին, Երուսաղէմի մէջ:

¹²⁴ Կ'ականարկէ Աւետիս Ահարոնեանի գրական գործունէութեան քառասնամեայ յո-
բելեանին, որուն կազմակերպութիւնը սկսած էր Դեկտեմբեր 1928ին («Ա. Ահա-
րոնեանի յոբելեանը», *Յառաջ*, 7 Դեկտեմբեր 1928) եւ պիտի նշուէր համագա-
ղութային կերպով (Փարիզի մէջ՝ 10 Մայիս 1930ին), եւ Հ.Յ.Դաշնակցութեան
քառասնամեակին, որ նոյնպէս նշուած է համագաղութային կերպով (Փարիզի
մէջ՝ 21 Դեկտեմբեր 1930ին):

¹²⁵ «Այս ալ նոյնպէս, ջիղերը կը խանգարէ» (Ֆրանսերէն):

¹²⁶ Արկածախնդրութիւն (Ֆրանսերէն):

¹²⁷ Վազգէն Շուշանեան, «Սիրոյ եւ արկածի տղաքը», *Հայրենիք ամսագիր*, Յուն-
ուար, Փետրուար, Մարտ, Ապրիլ, Մայիս եւ Յունիս 1928:

¹²⁸ Զաւօ (Զաւահիր) Ներսէսեան-Շանթ (1882-1945).- Լեւոն Շանթի կինը, մանկա-
վարժ, հանրային գործիչ:

- Իմ հող գալուս հարցը լուրջ է: Յառաջիկայ ծմեռ, ի՛նչ ալ պատահի հոս չկամ, մորթ պիտի փոխեմ: Այնպէս ո՛ր հետաքրքրուեցէք: «Աստծոյ հաց»ը բոլորին համար է եւ մեծ է տիրոջը զօրութիւնը: Բարեւներ ծանօթ ընկերներու:

Ձերդ՝ ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

ԺԴ.¹³⁰

25 Փետրվար 1930

Յարգելի՛ ընկ. Ս. Վրացեան,
Այսօր իսկ «Հայրենիք»ի հասցեով ձեզ դրկեցինք 150 նուիրատոմս 1էն 150 թուագրուած եւ 150 հատի չափ «կոչ» իւրաքանչիւր տոմսի հետ տրուելու համար: Ինչպէս գիտէք մեր առաջին հատորը արդէն մամուլի յանձնեցինք ու որպէսզի կարենանք վճարման պայմանները յարգել 3500 ֆրանքի եւս պէտք ունինք: Այս 150 նուիրատոմսերը եթէ յաջողիք զետեղել՝ մեծ չափով դիւրացուցած կ'ըլլաք մեր աշխատանքը:

Ձեզմէ կը խնդրենք ուրեմն՝

Ա) Կազմել Նիւ-Եորքի մէջ կեդր[ոնական] յանձնախումբ մը ու անմիջապէս յարաբերութեան մէջ դնել իրենց հետ: Յանձնել այս նուիրատոմսերը իրենց ու զանոնք լծել աշխատանքի: Ի դէպ ըսենք որ տոմսերը ծախուելէ յետոյ՝ կտրօնները մեզ պէտք է վերադարձնել անմիջապէս:

Բ) «Հայրենիք»ի մէջ երկու յօդուած նուիրել մեր ձեռնարկին: Ատիկա լաւ տպատրութիւն կրնայ գործել:

Գ) Տալ մեզ Զարդարեանի ձեռագիրները ունեցող ընկերոջ հասցէն՝ հարկ եղած պարագային կապ հաստատելու համար իրեն հետ:

Յայտնելով ձեզ շնորհակալութիւն որ անգամ հող կը շարունակէք աջակցիլ մեզ ու սպասելով պատասխանի:

Ձերդ սիրով ի դիմաց Ն.Գ.Բ.ի

ՏՈՔԹ. ԳՐԻԳՈՐԵԱՆ¹³¹

ԺԵ.¹³²

17 Մայիս 1930 Փարիզ

V. Ch.

6 place de la Sorbonne 6

Paris (5e.)

Յարգելի՛ ընկ. Ս. Վրացեան,

Ձեր վերջին նամակը ստացանք ժամանակին ու ըրինք ինչպէս որ ըսուած էր: Բոլորին կողմէ պաշտօն տրուած է ինձ մասնաւոր շնորհակալութիւն յայտնել

¹²⁹ Աշոտ-Արծրունի (Արծրունի Դուլեան, 1902-79).- հանրային գործիչ, խմբագիր: Կինը՝ մանկավարժ Լիա Ներսէսեան-Սիրուեան (1908-2000), Զաւօ Շանթի եղբոր աղջիկն էր:

¹³⁰ Առաջին հրատարակութեան համար, տե՛ս՝ Փանոսեան, «Վազգէն Շուշանեանի», էջ 150:

¹³¹ Ստորագրութեան կողքին դրուած է ՆԳԲի կնիքը:

¹³² Այս նամակին առաջին հրատարակութեան համար, տե՛ս՝ «Վ. Շուշանեանի երկու նամակներ», էջ 41-42:

ծեզ եւ խնդրել որ շարունակէք ներշնչողն ըլլալ Նիւ-Եորքի մասնաճիւղին: Հեռուէն գրուած նամակները՝ այնքան արժէք չունին որքան կենդանի խօսքը: Մեր ամբողջ յոյսը ուրեմն ձեր վրայ է աշխոյժ ու աշխատունակ մասնաճիւղ մը՝ ոտքի վրայ դնելու համար:

Գրքին վիճակը լաւ է: Որոշեցինք, փոխադարձ համաձայնութեամբ տպել 1000 օրինակ պարզ թղթի վրայ, 500 անելի ընտիր թղթի վրայ եւ 150 օրինակ ալ ազնիւ թղթի վրայ: Գրքին *textes*¹³³ շարուած է ու սրբագրելու վրայ ենք: Յառաջաբանը Մ. Պ.ն.¹³⁴ գրեց: Շատ լաւ չէ, պէտք ունի հիմնական փոփոխութեան, բայց... կը ճանչնաք մարդիկը՝ դիւրագագ եւ բծախնդիր: Կը կարծեմ որ ստիպուած պիտի ըլլանք ընդունիլ՝ նոյնիսկ եղածին պէս:

Երկրորդ գրքի մասին՝ մեր կարելին ըրինք: «Բանից դուրս է գալիս» որ Հրանդի¹³⁵ տողը մօտ մեծ բան մը չկայ ու կրկին հաւաքման գործը մենք է որ պիտի ընենք: Աշխատանք մըն է որ բաւական ժամանակի եւ ծախքի կը կարօտի: Գալով Գեղամ Բարսեղեանի գործերուն, որոնք որպէս ամբողջութիւն, անելի արժեքաւոր են քան Զարդարեանի էջերը, տակաւին չունինք: Վարդապետէն¹³⁶ ծայն չկայ եւ այս անտէր ձեռքը, որ անտարակոյս ուրիշ զբաղումներ կրնայ ունենալ, յոգնեցաւ անպատասխան մնացած նամակներ գրել: Թրքերէն առածը կ'ըսէ – *էլ էիլէն երլան թութ...*¹³⁷ Արդարեւ ուրիշի ձեռքով՝ օձ կարելի է բռնել, բայց ոչ լուրջ գործ կատարել:

Բաց աստի նիւթական դժուարութիւններ կան: Գրքին կողքին դրամը կը պահանջէ յարգելի զարդանկարիչը¹³⁸: Կողքն ալ բոլորիս սրտովը չեղաւ, բայց... գիտէք մարդիկը, ստիպուեցանք ընդունիլ, իր վերջնագրին հետ մասին:

Ահա՛ ինչ որ կար ըսելիք Ն.Գ.Բ.ի գործերուն մասին: Կը յուսամ որ այս տեղեկութիւնները շատ համառօտ չէք գտներ:

* * *

Անցնինք յաջորդ գլուխին:

Խոնարի անձնատրութեամբս կրկին ձեզ պիտի զբաղեցնեմ: Սիրելի *Տաւրոհ*¹³⁹ Շուշանեանի գործերը «վատ են գնում»: Նախ՝ երկու ամիսը... «չի ստացուել»: Երեւի պիտի ստիպուինք գործածել յայտնի տարազը (ֆորմովա եմ ասել ուզում) – *Մի քիչ փող ուղարկեցէք...*¹⁴⁰ «Սա շատ տխուր մի բան է»: Մարդիկ գաղափար չունին թէ ի՞նչ ըսել է Փարիզի մէջ տան վարձքի համար դրամ չունենալ: Ասիկա առ ի տեղեկութիւն ըսի ձեզ:

¹³³ Բնագիրը (ֆրանսերէն):

¹³⁴ Մկրտիչ Պարսամեան (1886-1965).- ֆրանսահայ գրադատ, խմբագիր:

¹³⁵ Հրանդ (Մելքոն Կիրճեան, 1859-1915).- արեւմտահայ արձակագիր: Մեծ Եղեռնի զոհերէն:

¹³⁶ Կակնարկէ Արսէն վրդ. Ղազիկեանին (1870-1932), Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ, բանասէր:

¹³⁷ Թրք. *el elilen yilan tut* (ուրիշի ձեռքով օձ բռնել):

¹³⁸ Գիրքին պատկերազարդումը կատարած է նկարիչ Մելքոն Քեպապճեանը (1880-1949):

¹³⁹ Ընկեր (ռուսերէն):

¹⁴⁰ Երուանդ Օտեանի *Ընկեր Փանջունիի* հերոսի յայտնի խօսքը իր նամակներուն մէջ:

Լաւ չեն նաեւ միւս գործերը: Կարգ մը գրքեր ձեռք անցուցի ու սկսայ համառօտ աշխատանք մը պատրաստել հայ մամուլի մասին: Բայց չեմ կարծեր որ պիտի շարունակեմ, նիւթի պակասը կը ստիպէ որ ուրիշ բանի ձեռք զարնեմ: Աշխատանքիս կէսին հասած՝ նկատեցի որ լաւ չէ, բնա՛ւ լաւ չէ... Իսկ ես, այս երեք տարուան ընթացքին գոնէ վկայականի համար չեմ աշխատած¹⁴¹: Ի՞նչ պիտի ընեմ վկայականը: Երկու հատ ունիմ¹⁴², Երկր[ագործական] նախարարութենէն «շքանշան»ով մը միասին: Ինչ որ ինձ պէտք է, հիմնական ծանօթութիւն մըն է որ հնարաւորութիւն տայ յետագային՝ մինակ շարունակելու: Յոյսս ամրան վրայ է աշխատելու համար: Աշնան պիտի գամ ուրեմն հոս՝ ամէն բան վերջացնելու ու Նոյեմբերի սկիզբները կրկին մեկնելու համար: Կարելի՞ է որ մինչեւ Հոկտեմբերի վերջ, հոգ չէ թէ անկանոն, այդ 700 ֆր.ը շարունակեն տալ: Կրնա՞ք միջամտել այս ուղղութեամբ... Այս մասին, առաջին առթիւ, եթէ գրէք շնորհակալ կ'ըլլամ:

Ամերիկա գալուս խնդիրը՝ ուրեմն այդպէս ջուրը ինկաւ: Այսուհանդերձ պէտք ունիմ անգլիերէնի: Ի՞նչպէս ընել: «Հայրենիք»ի մասին ու հոն աշխատելու հնարաւորութիւններու մասին՝ ձեր գրածէն տպաւորութիւնս այն էր՝ որ դուք ալ շատ չէք հաւատար որ կարելի է ատիկա: Եթէ կարելի ըլլայ՝ ես սիրով կուգամ: Անգամ մը լուծի տակ մտնելէ յետոյ՝ կարգապահութիւնը՝ օրէնք է ու խղճամիտ աշխատանքը՝ պարտադրութիւն: Եթէ կրնաք կարգադրել՝ կարգադրեցէք: Այդ պարագային Հոկտեմբերի վերջերը պատրաստ եմ այստեղէն հեռանալու: Կը կարծեմ որ կրնամ օգտակար ըլլալ իրենց: Կը կարծեմ նաեւ որ կրնամ աշխատիլ ընկ. Ռ. Դարբինեանի¹⁴³ հետ: Կը բաւէ որ կատարելիք աշխատանքս պարզ ըլլայ, մեկին: Ինձ կը թուի որ եթէ կարենաք այս գործը կարգադրել՝ լաւագոյն լուծումը եղած կ'ըլլայ, հակառակ ձեր կարծիքին: Յետոյ այդ երկիրը զիս շատ չի վախցներ: Յետոյ վերջապէս՝ քիչ մը կ'ազատիմք այս աղքատութենէն որ տարիներէ ի վեր մեր բաժինը եղաւ, գէթ մասամբ: Անընդհատ հաշուե՛լ գրպանիդ դրամը, անընդհատ մտածե՛լ վաղուան մասին, սենեակի վարձքին, ծակած կօշիկներուդ, ամէն գիշեր քնանալ զանազան պարտքերու հոգը սրտիդ մէջ ու միշտ երկմտիլ ճաշարանի դրան առջեւ: Ի վերջոյ քիչ մը յոգնեցուցիչ է ու գուցէ նաեւ քիչ մը անբարոյացուցիչ, երբ չափը կ'անցնի: Երեւակայեցէ՛ք անցեալ գիշեր, երազիս մէջ՝ բոլոր պարտքերս վճարած էի, մարդու բան պարտական չէի, ազատ մարդ մըն էի ու երջանիկ taxi մը կանչեցի, պայուսակներս նետեցի ներս ու ըսի - Gare de Lyon¹⁴⁴: Առաւօտը մարմնիս մէջ տարօրինակ ուրախութիւն մը կար: Յիշեցի երազս ու կարծես թէ բոլոր տարտքերս ետ վերադարձան: Իսկ անցեալ օր կատակով ընկերոջ մը կ'ըսէի,

¹⁴¹ 1927-30ին, Շուշանեան հետեւած էր Ընկերային բարձրագոյն ուսմանց վարժարանի դասընթացներուն:

¹⁴² Կ'ակնարկէ Վալապրի երկրագործական վարժարանէն եւ Մամիրովի կաթնատնտեսական վարժարանէն ստացած վկայականներուն:

¹⁴³ Ռուբէն Դարբինեան (Արտաշէս Չիլինկիրեան, 1888-1968).- հանրային գործիչ, խմբագիր: Արդարադատութեան նախարար Հայաստանի Հանրապետութեան մէջ (1919-20): Հայրենիք օրաթերթի (1922-48) եւ ամսագրի (1922-68) երկարամեայ խմբագիր:

¹⁴⁴ Փարիզի երկաթուղիի գլխաւոր կայարաններէն մէկը:

Մայաքովսկի¹⁴⁵ անձնասպանության աղթի որ - Մարդիկ կան որ անձնասպան ըլլալու իրաւունք չունին... - Ո՛վ... - Անոնք որ պարտք ունին[,] ըսի լրջութեամբ, tout de même¹⁴⁶ կարելի չէ գլուխդ առնել երթալ առանց պարտքերդ վճարելու: Երկուքս ալ խնդացինք, բայց ծիծաղներ կան որ գէշ կը հնչեն:

Հասանք հոս, էջին տակը ու ձեր «ի՛նչ կայ, չկայ»...ն միտքս են, կան: Օ՛ր ձեր «ի՛նչ կայ, չկայ»ն: Երեւակայեցէ՛ք: Անցեալները Աշտուղ քիչ մը տկար էր, *տամար*¹⁴⁷ բռնեց, գացի զինքը տեսնելու: Ի՛նչ կրնար ըլլալ նոր տեսած առաջին բանս: Նամակի մաս մը ու ձեր հարցումը՝ ձեր գրիչովը - ի՛նչ կայ, չկայ... Շատ բան ու ոչինչ նոյն ատեն:

Ձերդ՝ ՎԱՋԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

ԺԶ.¹⁴⁸

Փարիզ 16 Յունիս 1930

V.Ch.

6 Place de la Sorbonne
Paris (5e)

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,

Սկսիլը միշտ դժուար է, իսկ վերջացնելը համեմատաբար աւելի դիւրին, երեւի ատոր համար է որ, կարգ մը գրողներ հակառակ կողմէն կը սկսին իրենց պատմութիւնները ու չեն հասնիր սկզբնաւորութեան: Նամակ մը սկսիլը մասնաւորաբար դժուար է, որովհետեւ մարդ միշտ կը մտածէ, որ այս անիծեալ թղթի կտորները՝ անգամ մը նամակատուի ձգուելէ յետոյ, կը սկսին ինքնաշատուկ ու առանձին կեանքով մը ապրիլ ու ճիշդ շատ մը ապրող բաներու պէս կ'ունենան իրենց ճակատագիրը, կեանքն ու վախճանը: Եթէ մարդ ժամանակ ու տրամադրութիւն ունենայ ու անշուշտ նաեւ քիչ մը լրջութիւն - ինչ որ, ըստ ընկերներու, միշտ կը պակսի ինձ - կրնայ յուզիչ! տողերով բանաստեղծութիւն մը գրել բոլոր նամակներու մասին, անոնց որ կարելի է գրել եւ միասնորոն որ պէտք չէ գրուիլ բնաւ - ինչպէս պէտք չէ որ գրուէր իմ Անկարելի Օրագիրս - եւ կամ մնան առանց ղրկուելու: Ինչպէս բանաստեղծութեան այս ծաղրանկարը:

Գրել հեռաւոր մէկուն, անձնատուութեան ժամու մը ընթացքին, նամակներ որ կրնան կարդացուիլ, ոտքի վրայ կամ կառաշարի մէջ,

Երբ աճապարանքի մէջ է մարդ, կամ տագնապի, ծանծրոյթի անծայր տափարակի վրայ

Կամ ուրախութեան – ի՛նչ որ նոյն բաները չեն –

Գրել հեռաւոր մէկու մը որ կրնայ կարդալ՝ ո՛չ միայն գրուածը, այլեւ ինչ որ կայ՝

Լուսանցքի վրայ կամ տողընդմէջ եւ որ մարդ՝

Անփութութեամբ, գիտուն մեղսակցութեամբ կամ ակամայ կը ձգէ հող...

¹⁴⁵ Վլատիմիր Մայաքովսկի (1893-1930).- ռուս խորհրդային նշանաւոր բանաստեղծ: Անձնասպան եղած է 14 Ապրիլ 1930ին:

¹⁴⁶ Այսուհանդերձ (Ֆրանսերէն):

¹⁴⁷ Յամառութիւնս (թրքերէն):

¹⁴⁸ Նամակը գրուած է Koubok Barի (Place de la Sorbonne) նամակաթուղթի վրայ: Առաջին հրատարակութեան համար, տե՛ս՝ «Վ. Շուշանեանէն եւս երկու նամակ», էջ 55-57:

Գրել հեռաւոր մէկու մը որ կրնայ՝
 Հետեւելով բառերուն, գործածելով զանոնք
 Կառուցանել հոգեկան վիճակներ, տեսնել վանկերուն ետին
 Մարդը՝ գրիչը ավիին մէջ,
 Գրել՝ հեռաւոր մէկուն - Օ՛ր անցուցէք ինձմէ այս տկարութիւնը -
 Թունաւոր սլաքներ նետելու ասդին անդին, որ վաղ կամ ուշ
 Կը վերադառնան իրենց մեկնումի կէտին...
 Ձգուած տուփի մը մէջ, յանձնուած իրենց ճակատագրին
 Նամակներ
 Որոնց մարդ պիտի ուզէր հետեւիլ, նոր տողեր կցելու համար իրենց,
 Հերքելու համար, կամ իրենց ներքին ուժը տկարացնելու...
 Նամակներ որ կը տեւէ՝ գրողին կեանքէն անդին,
 Սխալմամբ կ'երկարածգէք զայն, կ'ամբողջացնէք զայն կամ կը խեղա-
 թիրէք...
 Նամակներ որ կը հանդիպիք գէշ օրի,
 Մերժումի գուցէ, գաղջ ընդունելութեան, սիրոյ...
 Որ կը յարուցանէք փոթորիկ, մախանք, տենդ: Կը քրքրէք առկայծ կրակ...
 Նամակներ՝ որ կը մնաք որպէս պատանդ, որպէս գերութիւն...
 Աղտողի, գէշ հետքերու պէս, վտանգաւոր բաներու պէս՝ որ մարդ մոռնայ
 սեղանին վրայ, անկողպ սենեակի մէջ: Որ կը բացուիք, յանկարծ կեանքի
 մը վրայ
 Որպէս անփափկանկատ, դաւադիր վարագոյր...
 Քառակուսի, գունաւոր, հոտաւէտ թղթերու վրայ,

Ուրիշ թղթերու վրայ տակաւին: Երբ կը մտածեմ, թէ ձեր բոլոր տեսակները
 Անցած են գրչիս տակէն, կարծես թէ
 Անորոշ մտահոգութիւն մը կը քսուի հեռուէն ինձ: Կարծես թէ՝
 Հոգիս է, որ բեկոր առ բեկոր ձգած եմ գէշ պահնորդներու մօտ, գէշ
 ընկերներու...

Կարծես թէ մարմնիս բոլոր մասերուն վրայ՝ խոցելի կէտեր կան ու շուտով
 Պիտի բազմաթիւ վերքեր բացուին...

Սթօք!¹⁴⁹ Ով շատգրիկ մուսայ, այսքանը կը բաւէ նամակներու մասին: Իրաւ է
 որ քաղաքացի Ա. Խոնդկարեանը չկայ որ կճէ քեզ, տհաճ ակնարկութիւններ
 ընելով եւ ո՛չ ալ ուրիշներ որ մտածեն թէ էջը՝ տօլար մըն է, վերջապէս պէտք է
 հասնիլ վերջաւորութեան, վերջապէս...

Վերջապէս պէտք է սկսիլ սկիզբէն կարծեմ եւ Ն.Գ.Բ.ի գէշ երկիր ինկած նա-
 խագահին, գործի վերաբերեալ նամակ գրել:

- Գիրքը գրեթէ շարուած վերջացած է: Կը մնան կարգ մը սրբագրութիւններ
 միայն: Եթէ պահանջենք արագացնել, կը կարծեմ որ մէկ ամիսէն կրնան յանձ-
 նել: Մինչեւ հիմա չէինք աճապարեր մտածելով որ լաւ էր հրապարակ հանել
 յոբելինական հանդիսութիւններէն (!) յետոյ:

- Նախատոմսերէ եկած գումարները աւելի քան բաւարար պիտի ըլլան՝ ամբող-
 ջովին մեր պարտքը վճարելու տպարանին: Բայց ինձ կը թուի որ առաջին

¹⁴⁹ Կանգ առ (անգլերէն):

առթիւ 300էն աւելի սպառում չպիտի կրնանք ունենալ, ինչ որ լուրջ դժուարութիւններ պիտի ստեղծէ մեզ համար:

- Գեղամ Բարսեղեանի գործին սրբագրութիւնը չի յառաջանար: Գրուած նամակներուն չեն պատասխաններ: Այս մասին որոշում չենք տուած:

- Կը թուի թէ մեր երկրորդ գիրքը պիտի ըլլայ *Հրանդի Պանդուխտի նամակներու* հաւաքածոն: Իր զաւակները վերջապէս ծայն տուին ու համաձայնեցան, բայց ինչպէս օրէնք է, որպէս գէշ որդիներ, ոչինչ ունին իրենց հօրմէն: Կրկին մենք պիտի հաւաքենք: Այս առթիւ, երեւակայեցէք, առնուազն 15-20 նամակ գրուած է Ռումանիա, Սուրիա եւ Վենետիկ: Արդիւնքը հետեւեալն է: Հ[այր] Արսէն Դազիկեանը, հաւաքիչ՝ ուրիշ գործերու, յանձն կ'առնէ լրիւ կերպով հաւաքել *Հրանդի* գործերը, բայց վարձատրութիւն կ'ուզէ: Կ'ըսէ որ *չըրախ*¹⁵⁰ չէ եւ իր ժամանակը սուղ է եւ դեռ ուրիշ բաներ, որոնցմէ կը պարզուի որ հայր-սուրբը 75 տօլարէն աւելի գումար մը կ'ուզէ արտագրելու համար: Մեր պատկառելի ընկերները, մէջը հաշուելով անպատկառս, կը կարծեն որ այդ գումարը պէտք է տալ եւ կը հաւատան որ Հայր Արսէնը խղճամտութեամբ կրնայ կատարել այդ աշխատանքը: Իր վերջին նամակը կը ներփակեմ¹⁵¹: Ձեր վզին տարապարհակ պարտք կայ՝ ափ առնել որեւէ հայ մեծատունի կամ կէս-մեծատունի դուռ ու պահանջել այդ գումարը, յանուն հայ դպրութեանց: Մեր պատկառելի Ն. Գ. Բ.ականները, այդ դրամը իրենց ձեռքով տեղաւորածի պէս, կը կարծեն գտնել որեւէ հայ ջոջի գրպանը: Այլեւս ձեզ կը մնայ՝

Ա) իրապէս որեւէ մարդ ճարել որ տայ այս գումարը:

Բ) կամ գտնել 2-3 նուիրատու, որոնց անունները կը յիշատակուին եւ ստանալ իրենցմէ 150-200 տօլար, ի հաշիւ տպագրական ծախքերու:

Գ) եւ կամ հարցը տանիլ Ն. Գ. Բ.ի Նիւ-Եօքքի մասնաճիւղին:

Ինձ կը մնայ հայցել ձեր ներողամտութիւնը՝ նման թղթի վրայ նման նամակ գրած ըլլալու համար: Կը յուսամ արժանանալ ատոր՝ քանի որ արդարացում մը ունիմ - լքողութեան ի՞նչ ըլլալը չգիտնալս:

- Նիւ-Եօքքի մասնաճիւղէն լուր չկայ: Համաձայն ձեր խորհուրդին գրեցինք, ինչպէս կ'ըսէիք, շնորհաւորեցինք, քաջալերեցինք, շատ մը բաներ ըրինք վերջապէս, բայց ձայն չեկաւ: Երեւի իրենց խանդավառութիւնը հանգչեցաւ ի Տէր: Ձէք կրնա՞ր թթօրեւել զիրենք այդ մահաթմբիւրէն:

* * *

Գործածելով աւանդական տարազը (էս էլ ձեր ֆօրմուլային հայերէնը)՝ կը հաստատեմ, չեմ գիտեր ո՞ր թուակիր, նախորդ նամակս: Ճշմարտօրէն կը յիշեմ ինչ որ գրած եմ: Նոյնպէս որ կրկնելու հարկ չեմ տեսներ: Օրերը գեղեցիկ չեն, այդ մենք վաղուց է գիտենք, բայց հակառակ փոթորիկին, ովկիանոսին վրայ թէ հոս, կը սպասենք մեր նամակի պատասխանին: Կը խնդրեմ որ չորս ամիս եւս շարունակեն դրկել ինձ տրուածը, այսինքն յովիս, օգոստոս, սեպտեմբեր եւ հոկտեմբեր, եւ այս անգամ կը կարծեմ որ այլեւս ոչ ոք չեմ անհանգստացներ: Եթէ կարելի չէ, շատ կը խնդրեմ որ երկտողով մը իմացնէք, որպէսզի գիտնամ ընելիքս:

¹⁵⁰ Աշակերտ (թրքերէն):

¹⁵¹ Նամակը պահպանուած չէ:

Գալով իմ հող գալու խնդրիս, կը տեսնե՞ք որ ձեր առաջարկած ձեռով կարելի չէ: Ես հիմա բազմաթիւ արկածախնդրութեանց պատրաստ եմ սակայն, մանաւանդ հող գալու հակառակ վերջին ընթերցումներու: Ի դէպ, թոյլ տուէք, ձեզ գիրք մը յանձնարարել՝ Georges Duhamelի¹⁵² *Scenes [sic] de la vie future*¹⁵³: Բայց պէտք է կարդաք զայն այդտեղ, բաղդատելու ու կարենալ հակակշռելու համար: Անսովոր ու իրեն համար բացառիկ խորութեամբ մը, գրեթէ բոռն, կարելի է ըսել նոյնիսկ ծածկուած ատելութեամբ՝ ան, ամենամանրամասն մեղադրագիրն ու պարսաւը կ'ուղղէ Միացեալ Նահանգներու դէմ: Մարդ մը՝ որ միշտ կէս-գոյներու, զուսպ ու արդար բառերու, ճշմարտութեան մեծագոյն բեկորին, մարդէ մարդ, ազգէ ազգ եւ քաղաքակրթութիւնէ քաղաքակրթութիւն՝ սիրոյ եւ հանդուրժողութեան կուսակից է եղած՝ չի կրնար զսպել իր զայրոյթը ու վայրագ հաճոյքով մը, ուր կայ ցաւ եւ դառնութիւն: Կը յարձակի աշխարհի մեծագոյն երկրին վրայ: Էջեր կան, ուր հակառակ իր զայրոյթին, ան կը հասնի մարդկայնութեան այնպիսի չափի մը, ճշմարտութեան այնպիսի բաբախուն ու սրտագրաւ շեշտի՝ որ իր գործը կը դառնայ կարծես արդարութեան գեղեցիկ ու զօրեղ արարք, տեսակ մը խաղաղ այլ վաւերական հերոսութեան: Իրական գիրք մը վերջապէս, որուն էջերուն ետին, մարդ կը տեսնէ *մարդ մը*, որ կ'ապրի ազնիւ լրջութեամբ մը, նուիրումով ու գուցէ տառապելով, հակառակ իր պնդումներուն:

Այստեղ ո՛չ մէկ նորութիւն: Կան միայն մարդիկ, որոնց պատմութիւնը դժուար է գրել: Որովհետեւ ի՞նչ անելի կարելոր նորութիւն՝ քան մարդիկը (որ կարծես միշտ նոյնն են եւ որ միշտ տարբեր են սակայն, անընդհատ կապի մէջ՝ իրենց շուրջիններուն եւ ինքզինքնուն հետ. անընդհատ որեւէ տառապանքի կամ դժուարութեան հետ գիրկընդխառն, անընդհատ պատրանքի մէջ) որոնցմէ մէկը պատիւր ունի ձեզ բարեւելու ու այս բոլոր տողերուն տակ այս անգամ լրջութեամբ տեղաւորելու իր անունը, որ ամբողջ պատմութիւն մըն է, շատ մը ուրիշ պատմութիւններու պէս՝ քիչ մը երգիծական ու քիչ մըն ալ տխուր՝ **ՎԱԶԳԵՆ**

ԺԷ.

23 Յունիս 1930 Փարիզ

Յարգելի՛ ընկ. Ս. Վրացեան,

Անշուշտ նախորդ նամակս ստացած կ'ըլլաք: Այսօր ձեզի նոր նեղութիւն մը պիտի պատճառեմ: Եթէ խնդրածս իրապէս չըլլալիք բան է՝ պատռեցէք նամակս... Հակառակ պարագային շատ շնորհակալ պիտի ըլլամ եթէ երկտող մը գրէք: Զանազան պատճառներով՝ չափազանց նեղ նիւթական կացութեան մը մէջ եմ. բացի ուրիշ բաներէ, այս վեց-եօթը ամսուան ընթացքին, ամիսը 400 ֆր. բաց մը հաշուելով շուրջ 2000-2500 ֆր. պարտք ըրի: Այս կամ այն ձեռով 1300-1400 ֆրանքի պէտք ունիմ, մինչեւ որ ինքզինքս գտնեմ: Ձեզմէ պիտի խնդրեմ, որ ձեր երաշխաւորութեամբ, եթէ կարենաք ինձ 50-60 տօլարի փո-

¹⁵² Ժորժ Տիւհամէլ (1884-1966).- Ֆրանսացի գրագէտ:

¹⁵³ Georges Duhamel, *Scènes de la vie future*, Paris, Mercure de France, 1930: Գիրքը գրուած է 1929ի վերջաւորութեան Տիւհամէլի Միացեալ Նահանգներ կատարած ուղեւորութենէն ետք:

խառնություն մը գտնէք: Կը խոստանամ անպայման մինչեւ (...) ¹⁵⁴ վճարել: Ե-
րիտասարդ եմ, կրնամ աշխատիլ, ծրագիրներ ունիմ: Եթէ կրնաք այս ծա-
ռայությունը մատուցանեցէ՛ք ինձ: Հոդ երկու ընկերներ ունէի, որ կրնային օգ-
տակար ըլլալ՝ բայց վիճակնին լաւ չէ: Յամենայն դէպս՝ կը ներէք պատճառած
ձանձրոյթիս համար: Ձեր վիճակին տեղեակ եմ, գիտեմ որ՝ ըրած դիմումս քիչ
մը տեղին չէ, բայց... կը խնդրեմ կրկին որ փորձէք բան մը ընել: Յիմար
կացություն է, ես ալ չեմ գիտեր թէ ի՞նչպէս պատահեցաւ այս բոլորը:

Բարեւներով ձերդ՝ ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

ԺԸ.

24 Յունիս 1930 Փարիզ

Յարգելի՛ ընկ. Ս. Վրացեան,
Ընկ. Զամալեանի ¹⁵⁵ խորհուրդին վրայ է որ այս երկտողը կը գրեմ, խնդրելու
համար որ միջամտէք Հայ Կարմիր Խաչի մօտ՝ որպէսզի ինձ տրուած
նպաստը, եթէ կարելի է, երկարաձգեն 4-5 ամիս եւս: Ատիկա մեծ ծառայութիւն
պիտի մատուցանէ ինձ: Եւ կը յուսամ որ ուրիշ առթիւ այլեւս չպիտի ձանձ-
րացնեմ զիրենք:

Առիթն օգտուելով շնորհակալութիւն կը յայտնեմ Կեդր[ոնական] Վարչութեան
ընկերուիկներուն որ այնքան բարեացակամ եղան դէպի զիս: Վերջերս ձեր
հասցէին երկու նամակ ձգեցի, անշուշտ ստացած կ'ըլլաք: Վերջինն պատաս-
խանին մանաւանդ՝ կը սպասեմ անհամբերութեամբ:

Ընկերական յարգանքներով ձերդ՝

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

V. Ch.

6 place de la Sorbonne 6

Paris (5e)

ԺԹ. ¹⁵⁶

11 Օգոստոս 1930 Փարիզ

Յարգելի ընկ. Ս. Վրացեան,

- Այս երկտողը կը գրեմ աճապարանքով՝ ձեզ հաղորդելու համար որ շուտով
լոյս կը տեսնէ Ռ[ուբէն] Զարդարեանի գիրքը ¹⁵⁷: *Պատրաստ* կայ քովերնիս
Հրանդի «Պանդուխտի կեանքէն» պատմութեան հատորը եւ շուտով պիտի
ունենանք ամբողջական գործը. *պատրաստ* են նաեւ Գեղամ Բարսեղեանի ար-
ձակ էջերը: Ռ[ուբէն] Զ[արդարեան]ի արձակ էջերը կը ձգձգենք որովհետեւ
ձեզմէ եւ միւսներէն ծայն-ծպտուն չելաւ: Գիրքը եթէ լոյս տեսնէ որո՞ւ, քանի հա-

¹⁵⁴ Զնշուած:

¹⁵⁵ Արշակ Զամալեան (Իսահակեան, 1882-1940).- քաղաքական գործիչ, գրագէտ:
Հայաստանի Հանրապետութեան շրջանին՝ դեսպան Վրաստանի մէջ, խորհր-
դարանի անդամ, հաղորդակցութեան նախարար:

¹⁵⁶ Այս նամակին նախընթաց հրատարակութիւններու համար, տե՛ս՝ Փանոսեան,
«Վազգէն Շուշանեանի», էջ 150-51. նաեւ՝ «Վ. Շուշանեանէն եւս երկու նամակ»,
էջ 54-55:

¹⁵⁷ Զարդարեան, *Ամբողջական երկեր*:

տոր պիտի դրկենք, չենք գիտեր: Կը խնդրեմ որ գէթ Մ. Նահանգներու զանազան քաղաքներուն մէջ, վստահելի մարդոց եւ ընկերներու հասցէները դրկէք ինձ, յիշելով թէ իւրաքանչիւրին քա՞նի օրինակ պէտք է դրկել, որպէսզի գէթ առաջին առաքում մը կարենանք ընել:

* * *

- Կ[արմիր] Խ[աջ]էն Յուլիսի հաշուոյն ինձ որեւէ բան չտուին եւ ո՛չ ալ Օգոստոսի: Կը յիշե՞ք, ինձ գրած էիք թէ կարելի է երկարածգել: Ընկ[եր] Զամալեանի խորհուրդին վրայ ժամանակին գրեցի ձեզ: Ձեզ գրած էի նաեւ ուրիշ անձնական նամակ մը, պատասխան չառի¹⁵⁸: Հակառակի պէս «Հայրենիք»էն այս ամիս, «Յուլիս»ի աշխատավարձքն ալ չդրկեցին: Խիստ գէշ դրութեան մը մատնուեցայ:

- Եթէ տեսնէք ընկ. Ռ[ուբէն] Դարբինեանը, կը խնդրե՞մ, ըսէք որ բոլո՛ր ըրած յապաւումները նկատած եմ¹⁵⁹: Հատուածներ, էջերու ամբողջ մասեր... բաց ինկած են. չպատահի որ կարծէ, թէ աննկատ անցած են իր... սրբագրութիւնները: Ապշութիւնս - չգործածելու համար ուրիշ բառ մը - այնքան մեծ է, որ ամիսներէ ի վեր կը մտածեմ թէ ի՞նչ կարելի է ընել, կամ ի՞նչ կարելի է գրել, քանի որ յանուն ո՛չ մէկ իրաւունքի կարելի է խօսիլ խմբագիրներու հետ, քանի որ խմբագիրները մարդիկ են՝ անխտելի ճաշակով ու աստուածօրէն գեղագէտ: Խօսի՛լ գրուած բանին հանդէպ յարգանքի անհրաժեշտութեան մասին՝ այլեւս շատ աւելորդ է: Ըսե՛՛լ՝ որ երկ մը որ գեղարուեստական ըլլալու յաւակնութիւնը կը տա՝ թէ կամ որպէս այդպիսին հիւրընկալուած է՝ իրաւունք ունի անձեռնմխելիութեան: Յառաջիկայ անգամին կ'առաջարկեմ գրածիս վրայ դնել.- Գրեց՝ Վազգէն Շուշանեան, սրբագրեց՝ Ռ[ուբէն] Դարբինեան: Ասիկա գոնէ ուղղամիտ բան մը կ'ըլլայ: Ռ[ուբէն] Զարդարեանի գիրքը սրբագրած ատեն, Լ[եւոն] Մօզեանը¹⁶⁰ եւ ես կը զարմանայինք թէ ի՞նչպէս ստուգապէս գեղեցիկ էջերու կողքին՝ կան այնքան գէշ էջեր: Ասիկա պատճառ մը չէ եղած սակայն որ այլ խմբագիրներ էջերով յապաւում ընեն: Բայց ի՞նչպէս որ ըսի՝ բանականութիւնը չէ որ կարելի է օգնութեան կանչել այստեղ, խմբագիրներու դէմ պաշտպանուելու համար: Միայն թէ՛ ամէ՛ն մարդ իրաւունք ունի մարդոց երեւալու այնպէս ինչպէս որ է: Ենթադրելով որ բոլո՛ր սրբագրութիւնները յօգուտ գրածիս են, կ'առարկեմ - թո՛յլ տուէք ընկ. խմբագիր, երեւալ հասարակութեան առանց սիրամարգի փետուրներու...

Թէեւ յանցաւորը իրապէս ես եմ՝ որ այնքան վատ եղայ, անըմբռնելիօրէն վատ: Լաւ կը ճանչնայի ընկ. Ռ. Դ.ն: Ի՞նչ որ պէտք էր՝ բ. գիրքը ետ ուզելն էր, ատիկա չըրի: Հիմա, ինչպէս որ առաձը կ'ըսէ, գնա՛՛ ու տէրտղ Մարքօ փաշային հասկցուր... Բայց տխուր է մեր ընկերներուն մօտ այս արքայական անբարեխղճութիւնը՝ ուրիշներու գործին հանդէպ: Գիրքը երկար ատեն քովը մնաց¹⁶¹, կրնար կարդալ, ըսել - ընկե՛ր, չեմ կրնար լոյս ընծայել, կամ հարկ է հետագայ

¹⁵⁸ Տե՛ս՝ 23 Յունիս 1930ի նամակը:

¹⁵⁹ Կ'ակնարկէ *Օրերը գեղեցիկ չեն...* վէպի երկրորդ մասին, որ լոյս տեսած է *Հայրենիք* ամսագրի 1930ի Փետրուարէն մինչեւ Յուլիս:

¹⁶⁰ Լեւոն Մօզեան (1890-1958).- ֆրանսահայ գրագէտ, հրապարակագիր:

¹⁶¹ *Օրերը գեղեցիկ չեն...* վէպի առաջին մասը լոյս տեսած էր *Հայրենիք* ամսագրին մէջ յաջորդական չորս թիւերու մէջ՝ Յունիսէն մինչեւ Սեպտեմբեր 1929:

փոփոխությունները ընել... Առաջին անգամը չէ, կարծեմ, որ ձեռագիր մերժած է, ամիսներ պահել է յետոյ ու վշտացող չէ եղած... Եւ այս բոլորը քանի մը թշուառ տօլարներու համար - որ իրա՛ւ որ արդարութեամբ շահած ենք եւ որ ժամանակին հասնելու առաքինութիւնը անգամ չունին...

Յարգանքներով ձերդ՝ ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Ի.¹⁶²

8 Սեպտեմբեր 1930

Յարգելի՛ ընկ. Ս. Վրացեան,

Մեծ գոհունակութեամբ ընդունեցինք ձեր նամակը ու մեր առաջին ժողովին մէջ իսկ, համաձայն ձեր թելադրութեանց, հարկ եղածը կարգադրեցինք՝ անմիջապէս հատորի պատրաստութեան սկսելու համար, զոր կը յուսանք լոյս ընծայել մինչեւ 1930 Յունիս¹⁶³ ամենէն ուշը:

Մեր երկրորդ հատորը պիտի ըլլայ՝ *Հրանդի Պանդուխտի նամակները*, զոր շուտով պիտի յանձնենք տպարան¹⁶⁴: Առ այդ, ուրախութեամբ ստացանք բժ[իշկ] Երկանեանի¹⁶⁵ նամակը, որով ան կը խոստանայ 100 տօլարի նուէր մը ընել մեզ, ձեռագրի հաւաքման ծախքերուն համար: Հարկ եղածը գրեցինք իրեն, բայց եթէ պատահի որ հանդիպիք իրեն՝ բերանացի եւս, կը խնդրենք հաղորդեցէք մեր ջերմ շնորհակալութիւնը:

Արձակուրդի առթիւ, կարճ ժամանակուան մը համար մեր ընդհատուած աշխատանքները՝ վերսկսանք եւ յոյս ունինք որ 1931ի ընթացքին, պիտի կրնանք լոյս ընծայել Հրանդէն, Գեղամ Բարսեղեանէն¹⁶⁶ եւ Գեղամ Տէր Կարապետեանէն¹⁶⁷ մէկ-մէկ հատոր:

Շնորհակալութիւն կը յայտնենք ձեզ՝ ձեր թափած ջանքերուն համար ու կը խնդրենք որ ընդունիք մեր լաւագոյն բարեւները:

Ի դիմաց Ն.Գ.Բ.ի՝

ՏՈՔԹ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Յ. Գ.- Ստացանք ձեր դրկած 100 տօլարը, ի հաշիւ Գ. Տէր Կարապետեանի գրքի հրատարակութեան համար՝ Տարօն-Տ[ուրութեանի] Հ[այրենակցական] Միութեան կողմէ վճարուելիք 400 տօլարին:

¹⁶² Նամակը գրուած է ՆԳԲի նամակաթուղթին վրայ՝ Շուշանեանի ձեռագրով: Առաջին հրատարակութիւնը տե՛ս՝ Փանոսեան, «Վազգէն Շուշանեանի», էջ 151-52:

¹⁶³ Կենթադրենք, որ վրիպակ է եւ պէտք է ըլլայ 1931:

¹⁶⁴ Հրանդ, *Ամբողջական երկեր*: Տե՛ս՝ Շրջիկ [Յ. Ճ. Սիրունի], «Մելքոն Կիւրճեան», *Հայրենիք*, 30 Օգոստոս 1931, էջ 1:

¹⁶⁵ ԲԺ. Յովհաննէս Էրկանեան յետագային եղած է Նիւ Եորքի յանձնախումբին ատենապետը:

¹⁶⁶ Բարսեղեան, *Ամբողջական գործք*: Գիրքը լոյս տեսած է Օգոստոս 1931ին: Այդ առիթով, *Յառաջ* թիւ մը նուիրած է Բարսեղեանին, որուն աշխատակցած է Շուշանեան եւս (Վազգէն Շուշանեան, «Գեղամ Բարսեղեան քաղաքացի, բանաստեղծ ու տեսլահար», *Յառաջ*, 16 եւ 18 Օգոստոս 1931):

¹⁶⁷ Տէր Կարապետեան, *Տարօնի աշխարհ*:

27 Օգոստոս 1931

Յարգելի՛ ընկ. Ս. Վրացեան,
Պզտիկ բարոյութիւն մը: Արփիարեանի գիրքը¹⁷⁰ ամբողջովին կազմուած, յանձնեցինք ընկ. Մ[կրտիչ] Պարսամեանին հետ տպարանին: Անցեալ օր իմացայ Գերասիմէն¹⁷¹ որ բժիշկը¹⁷² հեռախօսեր է, որպէսզի գիրքը իր անուան չարձանագրուի: Նախապէս երկուքիս ըսած էր իր մտադրութիւնը ու մենք աշխատած էինք տարիամոզել զինքը: Քիչ առաջ հեռախօսեցի՝ կը պնդէ որ իր անունով չըլլայ:

Ու որովհետեւ տպարանին առջեւ մէկը վերջիվերջոյ պէտք է պատասխանատուութիւն ստանձնէ, մտածեցի ձեզի գրել: Կամ Ձեր կամ ընկ[եր] Պարսամեանի անուան կարելի է արձանագրել: Լաւ է անշուշտ, որ որպէս նախագահի Ձեր անունը դրուի: Դուք ի՞նչ կը մտածէք:

Գիրքը խոստացան տալ Սեպտեմբերի վերջերը:

Բարեւներով՝ ՎԱՋԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ձեր տւած հարցերի պատասխանը կը ջանամ խտացնել հետեւեալ տողերի մէջ:

Պատերազմը ամբողջ մարդկութեան կեանքում առաջ բերեց սուր բեկում՝ քաղաքակրթութեան զարգացումը բաժանելով նախապատերազմեան եւ յետպատերազմեան մասերի: Տասն եւ հինգ տարի է անցել պատերազմի սկզբից, բայց նախապատերազմեան աշխարհը այլեւս անսահման հեռու է մեզանից: Պատերազմը ծնունդ տւեց նոր աշխարհի, նիւթական եւ հոգեւոր կեանքի նոր կառուցուածքի, նոր կենսահայեցողութեան, նոր զարգացման, նոր կենցաղի: Ստեղծեցին կեանքի նոր ձեւեր, նոր մտածողութիւն, նոր բարքեր: Հնի ու նորի միջեւ օրգանական կապ եւ ժառանգական անմիջական յաջորդականութիւն գրեթէ չկայ: Պատերազմի վիին է կանգնած երկու եզերքների միջեւ: Այստեղից եւ աշխարհայեացքի ու աշխարհագիտակցութեան տարբերութիւնը, ցաւագին անհասկացողութիւնն ու ներհակութիւնը նախապատերազմեան եւ այսօրուայ անդունդների միջեւ:

Այս երեւոյթի արտայայտութիւնը մեզ մօտ աւելի ցաւագին է, քանի որ պատերազմի գործած աւերներն էլ հայ հաւաքականութեան կազմի մէջ անհունօրէն աւելի ահաւոր են:

Պատերազմի անմիջական ծնունդ է արեւմտահայոց ջարդն ու Հայաստանի ամայացումը եւ արեւելահայերի բոլշեւիկեան քայքայիչ մտրակին ենթարկւելը, ո-

¹⁶⁸ Նամակը գրած է Շուշանեանը ու ստորագրած՝ Բժ. Լեւոն Գրիգորեանը, որ գրած է յետգրութեանը:

¹⁶⁹ Նամակը գրուած է ՆԳԲի նամակաթուղթին վրայ: Առաջին հրատարակութիւնը տե՛ս 'Փանոսեան, «Վազգէն Շուշանեանի», էջ 152:

¹⁷⁰ Արփիարեան, *Պարսամեաններն ու վիպակներ*:

¹⁷¹ Գերասիմ Բալայեան:

¹⁷² Կ'ականարկէ Բժ. Լեւոն Գրիգորեանին:

րոնք բոլորովին նոր կացութիւն ստեղծեցին հայ հաւաքականութեան համար: Տասն եւ չորս տարի է, որ գոյութիւն չունի արեւմտեան Հայաստան, արեւմտահայութիւնը, քանակով եւ որակով կրճատ՝ դարձել է տարագիր: Միւս կողմից Արեւելեան Հայաստանը ենթակայ է բռնութեան եւ ընկերա[յ]ին արհեստական փորձերի որոնք քայքայում են նրա տնտեսական եւ մտաւոր-բարոյական կազմածքը, ազգային մշակոյթը ճնշած է անհեթեթ երկանաքարի տակ եւ հազիւ պլպլում է ժողովուրդի ու բոլշեիկեան ապականութեանց զերծ մնացած երիտասարդութեան հոգում: Երկու մասերում էլ հայ ազգային մշակոյթի զարգացման ընթացքը խախտել է՝ մի կողմ ւելի, միւս կողմ պակաս:

Եթէ այս բնորոշումը, ընդհանուր առմամբ, ճիշդ է, ապա պարզ է, որ պատերազմից ասդին հրապարակ եկած «բազմաթիւ երիտասարդ գրողները» իրենց ապրումներով ու մշակած գրականութեամբ չեն կարող լինել բնական շարունակութիւնը «նախապատերազմեան հայ գրականութեան»: Եւ, ի հարկէ, չեն էլ համարում:

Միայլ չհասկանաք: Երիտասարդ գրագէտներից ոմանք, առանձին առած շարունակում են ապրել նախապատերազմեան ասանդութիւններով, բայց գրականութիւնը, իբրեւ այդպիսին, չի ներկայանում հնի աստիճանական մէկ փուլը, որովհետեւ (խօսքը, գաղթահայերի մէջ մշակւած գրականութեան մասին է) արեւմտահայ գրական յառաջընթացութիւնը կանգ է առել կամ, լաւագոյն դէպքում, կանգ առնելու վրայ է, ազգային կենդանի գրականութիւն չի կարող յարա-ժտելել գաղութներում:

Պատերազմից յետոյ, հրապարակ եղած կամ հրապարակ եկող «բազմաթիւ երիտասարդ գրողները» - եւ նրանց մէջ կան անպայման տաղանդաւոր ուժեր - արեւմտահայ գրականութեան բնականոն զարգացման պտուղ չեն, այլ արձագանգները նախորդ ժամանակների կամ տխուր առկայծումները ցան եւ ցիր եղած հայ մտաւորականութեան: Ամենաշնորհալիները նրանց մէջ կամ ապրում են նախապատերազմեան օրերի յուշերով (Համաստեղ)¹⁷³ կամ ներշնչման նիւթ են որոնում հեռաւոր անցեալում (Եղիա) Գասպարեան)¹⁷⁴ կամ, վերջապէս, անդէկ եւ անառագաստ, տարուբերում են անօդ տարածութիւնների մէջ (Վազգէն) Շուշանեան): Օսմանեան Սահմանադրութեան յաջորդ օրն իսկ Համիտեան կացնի տակ ջախջախւած հայ գրականութեան բոյնը արձակեց անհաշիւ ծիլեր, որոնք աճեցին արագօրէն եւ կենդանացրին մայր ծառը: Համաշխարհային պատերազմից յետոյ, այստեղ թէ այնտեղ, օտար հողի մէջ, երեւան եկան առանձին ծիլեր, բայց հայ գրականութեան բոյնը չծլած ջարդեց, որովհետեւ չկայ նրան սնունդ տող կենդանի հողը՝ հայ երկիրն ու երկրի ժողովուրդը, առանց որոնց չի կարող գոյութիւն ունենալ կենդանի գրականութիւն: Սա ողբերգութեան յատուկ աղբիւր է մեր երիտասարդ գրողների համար, որոնց մեծ մասը ըստ ձեւի մնում է կապած հնի հետ, ըստ էութեան՝ կտրւած է նրանից:

Մինչեւ այժմ ասածից հետեւում է, ուրեմն խօսքը միշտ գաղութահայութեան մասին է, որ «Նոր Գրականութիւն» գոյութիւն չունի կամ գոյութիւն ունի պայմանական իմաստով, որպէս նոր գրողների երկերի պայմանական հաւաքա-

¹⁷³ Համաստեղ (Համբարձում Կէլէնեան, 1895-1966).- ամերիկահայ արձակագիր:

¹⁷⁴ Եղիա Գասպարեան (1893-1948).- ամերիկահայ նկարիչ եւ թատերագիր:

կանություն: Կան գրողներ, կան գրածքներ եւ կայ բանական միություն այդ գրածքների միջեւ: Ասպարէզը բաւական հարուստ է հեղինակների ու նրանց արտադրությունների քանակով, բայց որպէս մի ժողովրդի հոգեկան ապրումների ամբողջական արտայայտություն, ազգային մշակոյթի օրգանական մի միություն հայկական գաղութներում չկայ եւ չի էլ կարող լինել եթէ գաղութների կապը Մայր երկրի հետ չվերականգնի: Ուստի եւ չի բաղդատի հնի հետ ու չի կարող համապատասխանել «ապրելու անխախտ կամք ունեցող ժողովրդի մը պահանջներուն եւ մտահոգութիւններուն»:

Գաղութահայ գրականութեան ամենայատկանշական կողմը, ըստ իս, արտաքինի մէջ է, ձեռի կատարելագործման ձգտումն է, որ անմիջական հետեւանք է օտար վարպետների ազդեցութեան, մեր երիտասարդ գրողների մէջ նկատուում է որոշ լեզվի ու ոճի յղկման, գրական ճարտարապետութեան զարգացման [1 բառ պակաս]: Ընդհակառակը գրածքների բովանդակութիւնը, գրական խորութիւնն ու բազմակողմանիութիւնը ակնյայտնի կերպով կաղում են: Չկայ որեւէ կենդրոնական գաղափար, որ յափշտակէ ու զբաղեցնէ գրական հանրային միտքը, որ առհասարակ, արտակերպողն է, անխտէալ, ուստոստուն, շարժապատկերային, բարոյական ներքին զսպանակներից զուրկ, հետեւանք միշտ միեւնոյն պատճառի, հողի բացակայութեան:

Գաղութներում ծնունդ առած երիտասարդ գրողների մէջ կան մի շարք հրապուրիչ անուններ, որոնց տաղանդը, ուրիշ պայմաններում, բոլորովին այլ հետեւանքներ կարող էր տալ հայոց գրականութեան: Դրանցից երեքն են առաջին տեղը բռնում - Համաստեղը, Եղիա Գասպարեանը, Վազգէն Շուշանեանը: Առաջին երկսի զարգացումը գնում է աւանդական ուղիներով: Մարմնապէս ապրելով գաղութահայ միջավայրում, հոգով բոլորովին հեռու են այդ միջավայրից: Նրանք հետեւում են հայ ու օտար լաւագոյն վարպետների օրինակին, լուրջ աշխատում են իրենց զարգացման համար հրապարակ դրած ամէն մի գրածքի վրայ, նշմարում են յամառ աշխատանքի հետքեր, չեն շտապում շատ բան տալ հասարակութեան, բայց ինչ որ տալիս են՝ լաւն են տալիս:

Գաղութահայ գրականութեան ամենատիպար արտայայտիչը ըստ իս Վ. Շուշանեանն է, որ «լաւագոյն կերպով կը ներկայացնէ այդ գրականութիւնը»: Եւ հէնց այդտեղ է նրա տկար կողմը, գրում է արագ ու շատ եւ ամէն բանի մասին, եւ անվիճելի շնորհքը վատնում է ապարդիւն անցողական հետաքրքրութիւն ներկայացնող նիւթերի վրայ: Իր գրական խոշոր աշխատութիւնների մէջ էլ, մնայուն արժէք ունեցող հիմնալի կտորների զուգընթաց թափած են եւ անեփ ու անմշակ էջեր, որոնք փճացնում են ընդհանուր գեղարուեստական շէնքի ամբողջական տպաւորութիւնը: Լրագրողն ու արուեստագէտը կատաղի պայքարում են նրա մէջ, եւ շատ ցաւալի պիտի լինի, եթէ յաղթական դուրս գայ առաջինը:

VAZKEN SHUSHANIAN'S LETTERS TO SIMON VRATSIAN
(1927-31)
(SUMMARY)

VARTAN MATIOSSIAN
varny1@yahoo.com

Two members of the Armenian Revolutionary Federation, French Armenian writer Vazken Shushanian (1903-1941) and Simon Vratzian (1882-1969), last prime minister of the first independent Republic of Armenia, corresponded actively in the period 1927-1931. Only a set of 21 letters written by Shushanian has reached us, along with Vratzian's response to a questionnaire submitted by him. The letters are kept in the archives of the Hamazkayin Cultural Society in Beirut.

The letters, which are published with a detailed introduction and endnotes, offer interesting glimpses about literary and political views, as well as Shushanian's personal struggle to make ends meet while finishing his studies. The letters also offer many details about the early activities of both correspondents on behalf of the Society of Friends of Martyred Writers, founded in 1929 to undertake the publication of the works, both unpublished and/or scattered in the press, of writers murdered during the Armenian genocide.